

DON'T TOUCH!

Gevorg Ter-Gabrielyan

ՁԵՌՔ ՄԻ՛ ՏՈՒՐ

Գևորգ Տեր-Գաբրիելյան

Ռուսերենում բացահայտ է բլատնոյ աշխարհը, քֆուրի աշխարհը, բռնության աշխարհը: Աշխարհում բացահայտված և բացահայտվում է բռնության աշխարհը: Իմ ապրած երևանյան տղայական աշխարհը բացահայտված չէ ո՛չ գիտականորեն, ո՛չ գեղարվեստորեն: Համարում եմ՝ մինչև այն չսկսի բացահայտվել, «մասկուլինիթի» կոչվածը չի հասկացվի:

Ծնողներիս ընկերները՝ կին թե տղամարդ, ասում էին. «Դու ճուճուլ ունե՛ս»: Եվ հրճվում: Երկու տարեկանից գիտեի, որ տղա եմ: Ինչու՝ էին խառնվում իմ մարմնի ինտիմ մասերին: Ինձ որպես օբյեկտ էին դիտարկում: Օգտագործում էին ինձ ինչ-որ նպատակով: Մարդը որպես օբյեկտ: Մարմին, մեքենա, մեխանիզմ: Մաշվում-կանգ է առնում, դեն են նետում: Տարիներ հետո համարձակվեցի ու իմաստուն ավագ ընկերոջս ասացի.

– Ինչ էլ լինի, կինը տղամարդու համար մի քիչ օբյեկտ է մնում: Գուցեն հակառակն էլ է ճիշտ:

Մտածեց, լռեց: Ասաց.

– Թոռնիկս նստում է ուսերիս, ականջներիցս բռնած՝ գլուխս պտտում է այս և այն կողմ, որ ուղղորդի՝ ու՛ր քայլեմ: Ես նրա համար մի քիչ օբյեկտ եմ:

Ուզում էր ասել՝ սերը մարդուն մի քիչ օբյեկտ է դարձնում:

Չեմ հասկանում այդ ուրախությունը, աժիոտաժը փոքրիկների ծննդյան և առաջին տարիների շուրջ: Փոքրիկները մեծանան՝ նրանց հանգիստ ուղարկում են բանակ և պատերազմ՝ մսադաց: Կարծես հենց դրա համար մեծացնելիս լինեն: Մայրիկները թե հանգիստ չեն ուղարկում՝ չեն էլ ապստամբում «կյանքի դրվածքի» դեմ:

Ներքևը կեղտ էր, վերևը՝ մաքուր: Ներքևը տաբու էր: Ամերիկայում ոտները դնում էին սեղանին, կամ աղջիկները նստում էին համալսարանի հատակին՝ տղաների զուգարանի դռների մոտ: Զուգարանը, իհարկե, աննախադեպ մաքուր էր Սովետի բոլոր հանրային զուգարանների համեմատ: Համալսարանի հատակը՝ նույնպես: Բոթասները լվանում էին հագուստի հետ՝ լվացքի մեքենայում: Ես դիտում էի «ներքևի» այդ ապատաբուացումը: Մինչ այդ արդեն կարդացել էի Բախտին և հասկացել կառնավալը՝ երբ վերևն ու ներքևը տեղերով փոխվում են – ժամանակավորապես, որպես շանթարգել՝ որ մարդիկ չապստամբեն, սակայն և՛ լրջորեն, ինչպես ամեն ծիծաղ է լուրջ. որպես նշան, որ աշխարհի սխալից, նրա թարս ու շիտակ լինելուց մարդիկ տեղյակ են, որքան էլ մնացած օրերին հարմարվեն արհեստական այդ համակարգերին: Կեղեքիչ, ստիպված ձևավորված, որ մարդկությունը մի կերպ յուր տանի: Մայրս էլ նշում էր իր զարմանքը, որ մուսուլման կանայք դեմքները փակում են, իսկ պորտները՝ բացում («Անապատի սպիտակ արևը» ֆիլմում): Ամերիկան շուտ չէր տալիս ներքևն ու վերևը, պարզապես՝ վերացնում տարբերությունը: Ինչպես և արևմտյան նորաձևությունն

The world of the *blatnoy* (Russian slang word for “criminal”), the world of profanity and the world of violence are well-studied in Russian culture. In other cultures too, the world of violence has been and is being profoundly explored. Yet, the world of my Yerevan boyhood has been explored neither scientifically, nor artistically. I think that unless it is scrutinized, so-called masculinity will not be understood.¹

My parents’ friends, both male and female, used to ask me: “Do you have a willy?” It cheered them up. I knew I was a boy at the age of two. Why did they meddle with my private parts? They viewed me as an object. Human as an object. No human dignity was assigned to me. A body, a machine, a mechanism. When it wears out, it is thrown away. Not until many years later did I have the courage to discuss this phenomenon with a wise older friend of mine: “And yet, a man views a woman as a bit of an object. Perhaps the opposite is also true.”

He fell silent, thinking. Then he said: “My grandson sits atop my shoulders, holding my ears and turning my head left and right to tell me where to go. I’m a bit of an object to him.” He wanted to say: love sometimes makes one into an object.

I don’t understand the joy and excitement of having a boy if, when they grow up, they are going to be readily sent into the army and thrown into the meat grinder of war. As if they are produced for this purpose. Mothers don’t rebel against the existing order of things.

The bottom was dirty and the top was clean. The bottom was a taboo subject. In America, people used to put their feet on the table, girls used to sit on the campus floor near the men’s room door. Needless to say, the toilet was exceptionally clean compared to the public toilets in the Soviet Union. So was the campus floor. American students used to wash their sneakers along with their clothes in the washing machine. I observed this de-tabooization of “the bottom.” I had previously read Bakhtin, and I understood the meaning of carnival – it’s when the top and bottom change places temporarily which serves as a lightning rod to prevent people from revolting. Carnival is also a serious event for there is always an element of seriousness in laughter; it signifies that people know what is wrong with the world, they are aware of its dubiousness no matter how they adapt to these artificial systems at times – oppressive by nature, imposed by force with a common justification: “so that humankind could survive.” My mother expressed her surprise at the fact that Muslim women covered their faces but exposed their

աղջիկներից չպահանջեց դեմքները փակել, սակայն պորտերը՝ բացեց:

Մեր տանը ոտքերի սրբիչն առանձին էր, մարմնինը՝ առանձին, դեմքինն ու ձեռքներինը՝ առանձին: Ամեն մեկս՝ ես, հայրս, մայրս, ունեինք մեր սրբիչները: Հետո մայրս սկսեց «գլուխ պահել» և նույնացրեց իր և հորը սրբիչները: Բանակում, երբ գնացի եռամսյա կուրսերի (1984)՝ Սովետաշեն, ծածկոցների վրա գրված էր «նոգի», որպեսզի չխառնենք: Որպեսզի, եթե սնկախտ են կպել մեր ոտքերը, դեմքներս չվարակենք: Այդ գրությունը կար Սովետի բոլոր պետական կացարանների ծածկոցներին, այնտեղ, ուր մարդիկ խմբերով էին գիշերում. ճամբարներում, հիվանդանոցներում, բանտերում, կայազորներում, «գժանոցներում», «ծերանոցներում», «որբանոցներում»:

Երկու տարեկանից կամ ավելի վաղուցվանից գիտեի, որ տղա եմ, և որ կա ներքև: Ներքևը նախ և առաջ տուտուզիկն էր, այն ավելի մեծ էր և ուրեմն ավելի արգելված պիտի լիներ, քան պուպուլիկը: Նրանով խաղալ չէր կարելի – ոչ քո, ոչ ուրիշի: Բայց ես հարևան աղջկա հետ բժիշկ-բժիշկ էի խաղում, իհարկե, երբ, երևի, հինգ տարեկան էինք: Տուտուզիկի հարցում ինձ, մի կողմից, հետաքրքրում էր, իհարկե, այդ հաճելի ուռուցիկությունը, այդ ատլասե մաշկը, դրա տակի մսի այդ պնդությունը և ոչ թե խորքային թաքնված անցքը, մյուս կողմից՝ ես ինքս ինձ կարդալ էի փորձում և չէի հասկանում՝ ինչու՞ է ինձ այդչափ քաշում այդ ուռուցիկությունը, սակայն նաև չի բավարարում, չարչարում է բավարարվելու անհնարիությունը, ասես կորցրած, մոռացված, բայց հանգիստ չտվող միտք, միտք, որը ներսից կրծում է՝ բայց չգիտես՝ ինչ է: Առաջին անգամ էր, որ հստակորեն և թաքուն տաբու էի խախտում: Մի բան պարզ էր այն օրվանից. թե մի բան արգելված է, տաբու՝ ես դրա մերկացման «գել» եմ: Ազատատենչ: Թե ձեռք տալ չի կարելի՝ պետք է «ձեռ գցել», թեկուզ թաքուն: Բայց ձեռք տալու այդ խիզախությունն ու նրանց՝ աղջիկների համաձայնությունը երկար չտևեց:

Շուտով ընկղմվեցի դաժանության աշխարհ՝ դպրոց, ուր դասամիջոցին տղաներն իրար գրկում էին հետևից և գոռում. «ք...ցի, ք...ցի»: Արագ սովորեցի (crash course) բոլոր տաբուացած հասկացությունները, որոնք նախատեսված էին մարդկանց, հատկապես՝ տղաներին (քանի որ աղջիկները «հաշիվ չէին») ստորացնելու համար, և դրանց փոխկապակցվածությունները: Ք...լ կարելի էր բերանից, կարելի էր ծծցնել, կարելի էր ծնողներին ք...լ (տեսականորեն՝ բառերով), մոր պ...-ը անարգել և այլն: Ծնողներին հայիոյելը ոչնչացնում էր քո արժանապատվությունն ավելի, քան անձամբ քեզ հայիոյելը կամ հետևից, շորերի վրայով իբր-«ք...-ը», քանի որ քո ինքնության՝ քո առաջացման դեմ ընդվզում էր: Այդպես «գործը» կրվում էր խոսքին, այդպես խոսքի ուժը հասկացա. արարքի դրդող խոսքի ուժը երբեմն ավելի է ազդում ուղեղիդ, քան լուռ արարքը:

1 Author’s note: This is not an academic article but a creative essay, therefore the referencing system is simplified, and no bibliography is provided. This essay is originally written in Armenian and for the Armenian-speaking audience. The omission of some contextual components may theoretically create difficulties for those English readers that are unaware of Soviet and post-Soviet realities, for which the author apologizes in advance. Great thanks to the translators and editors whose professionalism and devotion allowed for close to perfect (in my opinion) rendering of the original text.

navels (as they do in the film *The White Sun of the Desert*). In America the top and bottom didn't swap roles, just their difference was being eliminated.

At home we used three separate towels for drying our bodies, hands and faces as well as feet. Each of us had his or her own towels. Then my mother stopped bothering too much about it and shared the same towels with my father. In Sovetashen, where I underwent a three-month training (1984) while I was serving in the Soviet army, the blankets were marked in Russian ("ноги" meaning "for feet") so that if we had a fungal infection on our feet, it didn't spread to our face. Similar inscriptions could be found on all the blankets in all Soviet closed institutions – camps, hospitals, prisons, garrisons, "madhouses," "old people's nursing homes," "orphanages," etc.

At about the age of two, I knew that I was a boy and that the lower existed. First, it was the tushies: these were fleshier, therefore they had to be more forbidden than the willy. You were not allowed to play with either your tushy or anyone else's. However, when I was about five years old, I played doctor with the girl next door. When it came to tushies, I was more interested in their pleasant, rounded shape, their satiny skin, and the firmness of the flesh underneath them than in the deep hole hidden in between them. On the other hand, despite my attempts to decipher myself, I couldn't understand why I was so attracted to that rounded shape. I was tortured by the impossibility of being satisfied, as if it were a lost and forgotten but tormenting thought – a thought you are haunted by even though you don't understand what it is about. It was the first time that I broke a taboo. One thing became clear to me from that day on; if certain things are forbidden and viewed as taboos, then I cannot help but lift these taboos. The role of a free spirit. If it's forbidden to touch them, one has to "grope" them, even if secretly. However, the game of touching them and having a girl's consent for that didn't last long.

Soon I was immersed in the world of violence named school, where at break boys hugged each other from behind and shouted, "I f*cked you, I f*cked you." I learned quickly (crash course) all the taboo concepts meant to humiliate people, especially boys (as girls "didn't count") as well as the relationships between these concepts. One could f*ck someone in the mouth, one could make someone perform fellatio, one could f*ck someone's parents (not in practice, just verbally) or f*ck someone's mom's c*nt, etc. Someone swearing at your parents was more humiliating than swearing at you directly or any imitation of "f*cking" you from behind over your trousers, because the former was a revolt against your identity, against your origin. That's why "actions" were subordinate to words, that's how I understood the power of words. The power of a word provoking action sometimes affects your brain more strongly than the power of an action.

The mother is considered a saintly figure in many cultures, including in the Armenian triad of *rabiz* (a vulgarized version of Armenian popular music, which also became a specific subculture associated with bad taste), criminal and *qyartu*

Մայրիկդ – որպես սրբություն. եթե *ռաբիզա-գոդականա-քյարտուականից* դուրս հանենք՝ ազգիդ խորհրդանիշն է մարմնավորում: Ազգիդ կենսաբանականացումը: Այդ հայիտյանքի մեջ կար պահանջ, որպեսզի քեզ ընկալես որպես ծնողներիդ, կլանիդ, ցեղիդ մաս, ո՛չ թե առանձին անհատ: Ձուր չէ, որ ասում են, թե Ֆրանսիայում չկա «մորըդ ք...» հասկացության ազդեցությունը. «Որովհետև, – ասում է (չ) անարգվածը, – դա քո և իմ մայրիկի անձնական գործն է»: Ընտանիքի, կլանի, ցեղի, թրայրի մաս չի դառնում, մնում է առանձին անհատ, համոզված, որ, եթե պետք լինի, իր մայրը կկարողանա ինքզինքը պաշտպանել. նա է՛լ է առանձին անհատ: Հորն է՛լ օգնության չի կանչում / կանչի:

Իհարկե, մարդ կարող է չսիրել իր ազգականներին, բայց սոցիալական դիկտատը սովորեցրել է, որ սեփական «արյունդ» պիտի սիրես, ավելի պատասխանատու ես, որ մերձավորներիդ նեցուկ լինես, քան՝ «հեռավորներիդ»: Բայց պատկերացրեք աբսուրդ իրադրություն. ծնողիդ չես սիրում, ասում ես, բայց նրան հայիտյել են՝ ստիպված ես կռվել: Ինձ ծանոթ մարդու դեպք: Փողոցային շների դեպքում, ասենք, հենց որ լակոտները մեծացան, մայրը դադարում է նրանց ուրիշներից առանձնացնել, նույնիսկ կարող է նրանց հետ կենակցել, թեև գուցե շների մեջ էլ խելոքները կան, որոնք հասկանում են, որ այդ դեպքում սերունդը գուցե թույլ լինի:

Եթե ազգակցական կապի հանդեպ մարդկային այդ հատուկ վերաբերմունքն ունի ոչ կենսաբանական կամ *իշխա-շահագործողական* բացատրություն, վաղ թե լեզուն է. ավելի հեշտ է հաղորդակցվել մերձավորներիդ հետ, քեզ ավելի հեշտ են հասկանում, նույն լեզվով եք խոսում: Իբր: Երբեմն: Գոնե հույսը կա, որ կհասկանան... rare Ear not too dull (Էմիլի Դիքինսոն)... Ձեր հիշողությունների, լեզենդների մի մասը նույնն են, ավելի մեծ մասը, քան եթե իրար լրիվ օտար եք: Բայց՝ իրար չափից դուրս լավ եք հասկանում և ճանաչում, անհետաքրքիր եք միմյանց հաճախ, փոքր է ձեր խումբը մեծ աշխարհի հնարավորությունների հանդեպ: Իրար համաձայն չեք, իրարից հաշիվ ունեք, ո՛չ թե օտարից՝ մերձավորից: Օտարն իմ ի՛նչ գործն է, կարելի է չհուզվել: Հաճախ խաբուսիկ է ազգակցության և «ընդհանուր լեզվի» մերձավորությունը: Անգլո-ամերիկյան այդ դրդումը՝ թողնել տունն ու հայրենի անհետաքրքիր քաղաքիկն ու գաղթել այլուր, որքան կարելի է շուտ, – ապագային է միտված: Եվ հայտնի կենսաբանությունը. երբ ասում են, որ, իբր, տարբեր ցեղերի ներկայացուցիչների ամուսնությունից ավելի լավ երեխեք են ստացվում: Հանուն ազգապահպանման կամ իբր չուժացման շեշտվող հայոց *գյուղաքաղքենիական* դրույթը՝ «աշխատեք չամուսնանալ օտարազգիների հետ», անընդհատ խախտվող այդ ոչ այնքան էլ ուժեղ մեխվող (որովհետև կյանքն այն քանդում է) դրույթն «արյունապղծության»

(Armenian slang term for a “closed-minded person”) subcultures. This leads to another enigma. Is it because of declarative conservatism and traditionalism inherent in these subcultures or is it the desire to fit in with the values of the man in the street? If we get away from these stereotypes to understand deeper reasons behind the sacrilegious tradition of cursing one's mother, apparently it targets the nation itself. It represents the biologization of one's nation. Those specific swear words make you think of yourself as part of your family, your clan and your tribe, not as an individual. It's not by accident that in France the swearing “f*ck your mom” has no derogatory effect. “The point is,” says the (un)disgraced one, “that this is a private matter between you and my mother.” This person is not part of a clan, tribe, or any group; he is an individual. He is convinced that, if need be, his mother can protect herself, she is an individual as well.

Of course, you may dislike your relatives, but social norms dictate that you should love “your own flesh and blood,” take on more responsibility for the care of your close relatives rather than of “distant” ones. But let's imagine an absurd situation in which you hate your parents, but you must fight with the person who swore at them. It's the case of someone I know. In the case of street dogs, once the pups grow up, their mother stops distinguishing them from other dogs. She may even mate with them unless she is a clever dog that is aware of the risks of having weak offspring if such a thing happens.

If this special human attitude towards kinship cannot be fully explained either in terms of biology or in terms of power and exploitation, perhaps the glue that keeps kinship meaningful is language. It is easier to communicate with your kind, they understand you more easily, and you speak the same language. So to speak. At times. There is at least some hope that they will understand you... *rare Ear not too dull* (Emily Dickinson)... Some of your and your kin's memories and stories overlap, more so than if you were complete strangers. Often, however, you know and understand each other too well, you are uninterested in each other; your group is small compared to the possibilities of the larger world. You disagree with each other; you have more scores to settle with each other rather than with a stranger. You have nothing to do with a stranger, why bother? The affinity between kinship and “common language” is often deceptive. This common urge in the Anglo-American world to leave one's home and dreary hometown and move elsewhere as soon as possible seems to be the future of our post-Soviet society too. Add to that the popular biological notion that mixed marriages produce healthier children. Does this mean that the Armenian small-town and hidebound principle of convincing your own people not to marry foreigners for preserving the nation and supposedly for avoiding assimilation – a principle, fortunately, not so deeply ingrained (as life demolishes it) and constantly violated – covertly contributes to inbreeding and thus to the decline of a tribe? It is known that inbreeding was widespread in Armenia and elsewhere in the world among the villagers or nobility,

և ուրեմն ցեղի թուլացման թաքուն կողմնակի՞ց է, – մի բան, որ հայոց և աշխարհի այլ ազգերի գյուղերում և արքունիքներում համատարած էր, համենայն դեպս զարմիկների միջև: Ճիշտ հակառակ՝ սխալ հասկացված ազգապահպանման նպատակով կամ ընտրության սահմանափակ լինելու պատճառով: «Արյունախառնությունից» վախենալը թույլիկի վայրէջքն է, նրա, ով վախենում է ուժանալուց, ո՛չ թե ուժացնելուց:

2022-ի սեպտեմբերի 17-ին գրեցի. «Առաջին անգամ երբ 100 տղուկ սպանեցին (2016 թ. ապրիլյան պատերազմում)՝ սարսափ էր: 2020 թ. 44-օրյա պատերազմում օրական երբ 100-ի չափ տղուկ էր ծվեն-ծվեն՝ կսկիծ էր և վայնասուն: Հետո եկավ Ուկրաինան, և սովորեցի, որ բյուրերով են սպանում «իրական մեծ աշխարհում»: Միբիային, իհարկե, «նեոկոլոնիալիստ» ուշադրություն չէի դարձրել շատ, չնայած նույնիսկ ազգակիցներիս՝ Հալեպին, Քեսաբին և այլն: Հեռու էր թվում: Էլ չասած՝ Աֆղանստան, Իրաք, ուկրաինական առաջին պատերազմ և այլն: Չէի ըմբռնում, ո՛նց կարող է չորս օրում 100 սպանվածի դեպքում (էլ չհաշված դիմացինի զոհերը) երեք հազար սպանվածը տասնյակ տարում (ներքնասպանությունները մեր բանակում) ըմբռնվել: Դրանք որ շաբաթը 1-ը, 2-ն էին սպանվում՝ իբր «տանելի» էր:

Հիմիկվա սպանվածների առումով արդեն բթացել էմ, չեմ զգում:

Հետո էլ ասում էք «դեմոգրաֆիա» և աղջիկների *աբոռոտ*:

Հեռուն մոտիկ պահելը, հեռուն զգալը, հեռվին թեկուզ միայն ապրումակցելը, էլ չասած՝ հոգով-սրտով և արարքով մասնակցելը՝ որ վատը դադարի կամ կանխվի,- գիտակցության մեծ ճիգ են պահանջում, հոգեկան եռանդի մեծ ծախս: Առողջությանդ վնաս է: Հե՛շտ է անջատվելը... Հաղթահարելու ձևեր կան, բայց միննույն է, հեռուն շատ է, մոտիկը՝ համեմատաբար ո՛չ այնքան: Հեռվին թե շատ ես ապրումակցում՝ մերձավորիդ զգալը է թուլանում: Ամբողջ հեռուն չես պարփակի հոգումդ, եթե, իհարկե, աստված չես (կամ՝ Ամերիկայի պես գերտերություն): Էգոիզմը – և այն հաղթահարելու ճիգերը, ձևեր փնտրելը – մարդու գոյության հիմքերից են: Դրա համա՛ր է մարդը կենտավրոս. Էգոիզմը՝ կա և «բնական» է, գիտակցությունն անբնականորեն, արհեստականորեն պահանջում է դրանից գոնե մի քիչ ձերբազատվել:

Առաջին դասարանից խորհում եմ հայհոյանքների շուրջ: Հայհոյանքն աբսուրդակցիա չէր, հայհոյանքի ռեֆերենտը ֆիզիկական արարքն էր: Բերանի հարցը զարմացնում էր. ու՛ր են կորչում ատամները, ինչու՞ նրանք չեն կծում առնանդամը, երբ փորձում են իրենց «ծծցնել»: Բնականաբար, ամենն ընկալում էի զուտ «քցելու», ստորացնելու տեսակետից: Որքա՛ն վախեցած ու ստորացած պիտի լինես, որ համաձայնես և չկծես: Երևի – զզվում են «շեռի» համից, շուրթերը հեռու են պահում որքան կարող են: Օգու՛տը: Պիտի կծեն և դուրս թքեն:

Հայհոյանքների վերաբերյալ ընթերցել եմ բազում նյութեր, սակրալ

at least between cousins. It happened due to the misconstrued objective of preserving the nation or due to limited choices for a spouse. Inbreeding seems to be the downfall of a weakling – the one who is afraid of being assimilated rather than capable of forcing others to assimilate.

On September 17, 2022, I wrote: “The first time a hundred boys were killed (during the April War in 2016), we were horrified. During the 44-Day War, hundreds of boys were being blown to pieces every day, and we mourned and wept bitterly. Then came the war in Ukraine, and I got used to the fact that thousands are being killed in “the real great world.” Obviously, I, the “neocolonialist,” didn’t pay much attention to Syria even though my kinsfolk lived in Aleppo, Kessab, and elsewhere. They seemed far away. Not to mention Afghanistan, Iraq, the first Ukrainian war, etc. While thinking of those hundred soldiers killed in four days (not counting the casualties on the other side), I didn’t understand how one could grasp the fact that three thousand soldiers were killed in ten years (that has been the rate of violent deaths in our armed forces in relatively “peaceful” times). As if those incidents involving one or two fatalities a week were “bearable.”

As for those killed today, I am stupefied, I don’t feel anything. Meanwhile, you keep talking about problems with “demographics” and “sex-selective abortions.”

Out of sight, out of mind. Keeping a close eye on distant places, being aware of them, or just empathizing with them from afar, even more, making every endeavor to prevent bad things from happening there requires a tremendous effort, a great expenditure of psychic energy. It’s bad for your health. It’s easy to switch off and distract oneself. Distant disasters are countless compared to those that are within reach. You have no capacity to empathize with all things distant unless, of course, you are a god (or a superpower like America). The more you empathize with distant things, the less you will be able to feel for what is in proximity. Selfishness, together with the ways of overcoming it and seeking solutions lie at the foundations of human existence. Therefore, man is a centaur, a unity of natural and artificial (see below); though egoism is a “natural” and inherent phenomenon, our consciousness unnaturally and artificially calls for getting rid of it at least a little bit.

I have been thinking about profanity since the first grade. Swearing was not an abstraction, it referred to physical activity. I was disconcerted by the riddle of the mouth. How come the teeth are useless, why doesn’t one bite the penis when being forced to suck it off? Naturally, I perceived it as a way to humiliate and drag others down. You have to be too intimidated and humiliated in order to give in without biting. Probably one is repulsed by the taste of “piss,” trying hard to keep one’s lips off the penis. It’s no use! One has to bite it off.

I have read about swearing a lot, from the theory of sacred words which changed their meanings to the assertion that swearing is a way of expressing emotions. Gasan Guseynov has been analyzing this genre for decades – from Soviet swear words to Putin’s speeches. According to him, swear words fulfill the

բառերի վարկածից մինչև այն պնդումը, որ հայիոյանքներն անհրաժեշտ են էմոցիա արտահայտելու համար: Գասան Գուսեյնովը Մովսեսի հայիոյանքներից մինչև այսօրվա պոստիդյան լեզուն վերլուծում է երկար տասնամյակներ: Նրա ձևակերպմամբ՝ ռուսերենում հայիոյանքները կատարում են հետևյալ դերերը. ա. իբր՝ *իշխից* ազատություն. բ. իբր՝ անկեղծություն. գ. քաղաքական տաբուներից չտառապելու միջոց. դ. *իշխի* (բռնության) լեզվին «համապատասխանելու» ձև: Կարևոր էմ համարում հայիոյանքների կապը *բլատնոյ*՝ քրեական լեզվին:

Դպրոցում երկար ժամանակ կարծում էի, որ ք... են միայն հետույքից (կամ բերանից և այլն), մեծ մասամբ տղաները՝ միմյանց, իսկ եթե աղջիկներին և կանանց՝ ապա նույնպես զուտ անարգելու նպատակով: Հաճույք՝ այո՛, կարծում էի, որ ստանում են, բայց՝ անարգելուց, և միայն անարգողները, ո՛չ անարգվողները:

Ստացվում էր դաժան կառնավալ. արտաթորանքն ու սեքսն իրար էին խառնվում (ասենք, տղամարդու դեպքում բնությունն արդեն խառնել էր՝ մեկ և նույն ջրանցքը հատկացնելով երկուսի համար էլ), բայց, սեփական հետույքը լիզող կատուների պես՝ մարդը խառնում էր նաև ուտելն ու սեքսը, վերևն ու ներքևը: Անարգվածի արցունքը ծորում էր հետույքի բլթակների միջև (Դանթե): Մամայի սրբիչները լրիվ անիմաստ էին դառնում: Պայքար հողմաղացների դեմ: Արտաթորանքը, թեև էլի ստորացուցիչ էր և տաբու, սակայն այդքան չէ՞: Դաժանության և տաբուության աստիճաններ կային, «քաքլան» ասելն այնքան ստորացուցիչ չէր, որքան՝ «բերանդ ք...մ» կամ «մորթդ պ... ք...մ»: Կար մի ամբողջ ասպարեզ՝ «զուգարանային հումոր», որն ավելի «ընդունելի» էր, քան սեքսի ասպարեզը բաց քննարկելը: Ռարբեն էլ «զուգարանային հումոր» ազատորեն է անում, իսկ սեքսը կարծես կորչի, դառնա զուգարանային հումորի մաս կամ ծաղրվի: Բայց ինչու՞ էր այդ բնական, թվում է, բանը՝ սեքսը, նույնքան և ավելի տաբուացած, քան արտաթորանքն ու դրան առնչվող աշխարհը, իբր՝ կեղտը, հակա-մաքրությունը, «հիվանդության բուժը», որն էլ հենց ծնել էր «ձեռք մի՛ տուր, հո տ է գալու» արտահայտությունը, սակայն վերջինս պտտվել և եկել կպել էր սեքսին: Մերն ու սեքսը – աշխարհը տարփողում էր տղամարդու և կնոջ սերը, առանց մանրամասնելու – բայց ինչպե՞ս էր միաժամանակ հաջողեցնում դա տաբուացրած պահել: Եվ դա կենդանականն ազնվագարմացնելու ձև չէ՞ արդյոք, և գուցե ճիշտ են մտայն ֆունդամենտալիստ կրոնավորները: Կենդանիները ռեակցիա չեն տալիս, երբ նրանց ներկայությամբ կենակցում են: Եվ իրենք էլ չեն քաշվում ձեր ներկայությամբ կենակցելուց: Միմենոն իր կյանքի պատմություններում ասում էր, թե Թահիթիում էլ է այդպես՝ առանց քաշվելու՝ են կանայք «տրվում» տղամարդկանց, բոլորի աչքի առաջ: Դեռահասի երագանք: «Դրա համար էլ Գոգենը գաղթեց այնտեղ»: «Վախենամ», դա է՛լ են արդեն փչացրել, ամոթացրել:

following functions: a. a way to exercise one's freedom from power, b. a way to be sincere, c. a way not to suffer from political taboos, and d. a way to fit or blend into the language of power and violence. I think it is important to emphasize the link between profanity and *blatnoy* or criminal language.

Throughout most of my initial school years, I thought that one got f*cked only in the ass (or in the mouth, etc.), and that it mostly took place between boys. And if it happened with a woman or a girl, it was only to humiliate her. I thought one definitely got pleasure from this activity, though deriving it from humiliating others. This pleasure belonged only to those who humiliated others. It was a cruel carnival; human waste and sex were mixed (as for men's willies, nature already mixed them by providing the same channel for both; the tushies, in my early interpretation of sex, had a similar feature). Like a cat licking its ass, man mixed food and sex, waste and sex, top and bottom. *The tears of the humiliated ran down the cleft of their buttocks* (Dante). Mom's towels proved to be completely useless. An exercise in tilting at windmills. The word "shit," though debasing and impermissible, was not the worst insult, was it? There were degrees of cruelty and taboo. Saying "you crapped your pants" was not as demeaning as "f*ck your mouth," or "f*ck your mom." There was a whole genre of profanity called "toilet humor" which was more "acceptable" than having an open talk about sex. Rabelais openly used toilet humor as well. Meanwhile, sex disappeared as a subject; it was either viewed as part of toilet humor or held up to ridicule. Why on earth is sex, this seemingly natural thing, perceived as much or even more taboo than waste excretion and everything it entails, namely filth, impurity, "the root cause of disease," all that provide the foundations for the expression "Don't touch shit and it won't stink." As for sex and attraction, the whole world glorified love between a man and a woman without going into detail. So smoothly did the world turn it into a taboo subject. Isn't it a good way to ennoble the animal side of human nature? Maybe gloomy religious fundamentalists are right. Animals do not react when people have sexual intercourse in their presence. Likewise, our presence doesn't bother them when they mate. In *Les Dictées*, Simenon writes that in the past, Tahiti girls "gave themselves" freely to men in front of everyone. A teenager's dream. "That's why Gauguin moved there." "I'm afraid" that eventually they cast a slur on this practice and stigmatized it as well.

The use of swear words in public written discourse has become acceptable in the Anglo-American world presumably since the nineteen-sixties and in the Russian-speaking world since perestroika (1985). As for the Armenian-speaking world, I think that, with few exceptions, it spread massively on Facebook during the 44-Day War (and "thanks to it"). It was both a progressive and sad fact. It was progress because as soon as swear words are used in public written discourse, they become less insulting.

Հայիոյանքների մուտքը հանրային գրավոր խոսույթ, որն անգլո-ամերիկյան աշխարհում կատարվեց, երևի, վաթսուներկաններից սկսած, ռուսալեզու աշխարհում կատարվեց պերեստրոյկայից սկսած, իսկ հայալեզու աշխարհում՝ չհաշված բացառիկ դեպքերը, իմ դիտարկումով ֆեյսբուքում մասսայական դարձավ 44-օրյա պատերազմի ընթացքում և «շնորհիվ»: Դա և՛ զարգացում էր, և՛ տխուր փաստ: Զարգացում, որովհետև հանրային գրավոր խոսույթ մտնելով՝ դրանք իրենց անհատապես անարգիչ նշանակությունը մեղմում են: Հրանտ Մաթևոսյանը մի տեղ ունի մոտավորապես այսպիսի արտահայտություն գրված (կարծեմ «Կայարան»-ում). գործող անձն ասում է. «Քրֆի՛ր, քրֆի՛ր, դու է՛լ քրֆիր մայրիկիս, իմ մայրիկը սովոր է, ոչինչ» (սա ճշգրիտ ցիտատ չէ, հիշողությամբ եմ վերարտադրում): Գուցե «շուլալել» է ասում կամ նույնիսկ չեզոք «հայիոյել»: Ի՞նչ պատճառներ պիտի լինեն, «ֆրանսիականից» բացի, որ ծնողին հայիոյելը ուստնելու ձգան չդառնա. ավելի մեծ օգուտ պիտի ստանաս կամ ավելի մեծ խնդիր լուծես, քան ծնողիդ քրֆելուց ստացածդ վիրավորանքը: Վաշխառու ես և լիքը փող ես վաստակում պարտապանից, անտառապահ ես և անտառն ես պաշտպանում՝ ծառ կտրողին տուգանելով: Ուժեղ ես, ուշադրություն չես դարձնում նրանց անգոր քֆուրներին: Ինդիվիդուալ ես այլևս, ընդհանուրի մաս չես: Կապիտալիզմ կամ քրիստոսություն: Անհատ: Կամ էլ հարմարվում ես, սողանցք «գտնում», եթե հայիոյանքը կարելի է մեկնաբանել որպես ոչ քեզ հասցեագրված, որպեսզի *քիլիլ* չստացվի: Ա՛յդ է պատճառը, որ հայիոյական բառերը՝ ինքզինք քչաքանակ, պատմականորեն բազում լեզվական փոխակերպումների են ենթարկվում, անսպառ լեզվաստեղծագործության հնարավորություն տալիս, որ հայիոյողն է՛լ ռիսկի չդիմի, և գրուցակցին (կամ ընթերցողին) չքվա, թե հենց իրեն, ի՛ր մայրիկին, հայրիկին և այլն նկատի ունեն: Մարդու հոգու հետ խաղալու փայլուն միջոցներ: Մաքսիմալիստ էի/եմ, նույնիսկ կողքովս անցնող տղան երբ թքում էր/է ինձ մոտիկ շառավղով, համարում էի/եմ, որ անձամբ ինձ անպատվելու նպատակով է անում:

Հանրային գրավոր խոսույթ ահա մտան քֆուրները հայոց ծիրում, դեռ էլի լրիվ չեն մտել, ինչպես, օրինակ, ռուսերենում, որտեղ տենդենցը հետևյալն էր. ստեղծագործաբար դրանք մտան գրականություն հատկապես պերեստրոյկայից սկսած, հետո մտան համացանց, հետո՝ սոցիալական ցանցեր և այնտեղ մնացին, թեև գրականությունից որոշ առումով դուրս մղվեցին ցենզուրայի պատճառով, որն ուղեկցեց պուտինյան ռեժիմի քաբացումը: Խոսքս, իհարկե, ամենակոպիտ մի՛ քանի բառով քֆուրների մասին է, թեև բոլոր մնացած տարբերակները՝ Էվֆեմիզմները, թերասացությունները, նույնպես հետաքրքիր են, ինչպես, օրինակ, «մայրիկիդ լացացնեմ», «մաման գմփա» և այլն: «Տիրոջ մայրը»՝ թեկուզ «տիրուդ մերը»... Կա՛մ Տիրամորն առնչվող (մաքուր քրիստոնեական քֆու՛ր: Կրո՛նըդ են քրֆում), կա՛մ՝ անհասկանալի մեկ

In one of Hrant Matevosyan's writings a character utters such a phrase: "Cuss, cuss my mom out, go ahead, she is used to it, it's okay, I'll bear with it" (this is not an exact quote, I reproduce it from memory). Is there any case of cursing someone's parents that would not provoke a fight? Given you are not a French guy? You have to get more out of your work or tackle bigger problems than feeling resentment against those who swear at your parents. You are a moneylender, so you make good money by lending it. You are a forester, so you take care of the forest by charging illegal loggers. You are strong enough to ignore their helpless swearing. You are on your own, not in a group with others. An individual. Another option is to adapt to it or find a "loophole" that will allow you to interpret swear words as not being addressed to you and thus avoid a *kildim* (Armenian slang word for "mortal fight," uniting the English "kill" with the Turkic ending "dim"). Isn't that the reason why swear words – and there are not many – undergo countless linguistic transformations throughout history, providing an opportunity for endless linguistic creativity so that people who swear don't face risk and those who hear (or read) swear words don't think they are directed at them or their parents in particular? It's a brilliant way to tease people. I was/am a maximalist; even when a guy walking right past me spat on the ground near my feet, I took it as a personal insult.

Thus, profanity has entered public written discourse in Armenia, though not to the fullest extent as in Russia where the trend was as follows: it was first creatively manifested in literature, especially after perestroika, then it pervaded the internet and social networks and still occupies that space though partially expelled from literature by the censorship that accompanied the tightening grip of Putin's regime. Of course, I refer to the strongest swear words, though other versions, including euphemisms and innuendos, are always ready to substitute for the most naked and important words such as in *mayrikid latsatsnem* (Armenian swear expression, which literally translates as "I'll make your mother cry"), *maman gmpa* (literally translates as "blowing up a mom"), etc. *Tirud mery* is another Armenian expletive directed at "your master's mother." Either it refers to the mother of God (is it a purely Christian expletive used for cursing one's religion?), or to another unknown master, for if I am free and not owned by a master, then who is this cuss directed at? If I am a slave owned by someone else, then I should be happy in case my master's mother is screwed... Maybe the word "master" refers to one's father?

Let's take the example of those swear expressions that are not addressed to anyone. In Armenian one may say "f*ck the mouth" (not "f*ck your mouth"). In Russian many swear words lost their derogatory meaning (e.g. *blya*, meaning "what the f*ck," but literally coming from "(you are a) whore") and are used as placeholders. "Russian military slang" was a common expression in Soviet times, meaning that after serving in the Soviet army boys couldn't help but use curse words if they spoke Russian. Now this slang is spread among the Russian-speaking population, and one can see how it grew from 2014 until today. A compromise is

այլ տիրոջ, որովհետև եթե ես ազատ եմ և տեր չունեմ գլխիս, ապա ու՞մ են քրֆում... Իսկ եթե անազատ եմ՝ ճորտ, և տեր կա գլխիս, ապա ավելի լավ, եթե նրա մորը շինեն, վրեժս հանեն... Թե՞ հայրը որպես տեր: Տատի՞ն են քրֆում:

Կամ՝ ընդհանրապես քրֆելը, իբր՝ ոչ հասցեագրված, օրինակ՝ «բերանը (ոչ թե «բերանդ» ք)... Ռուսերենում տարածված է, որոշ բառեր (բլյա) քֆուրային իրենց իմաստը վաղուց են կորցրել բանավոր խոսքում, դարձել եղանակավորիչ: «Բանակային ռուսերեն» արտահայտությունը կար Սովետի ժամանակ: «Յոթ տվոյու մած»-ը ռուսերեն այլևս քեզ չէր վերաբերում իբր, չնայած «տվոյու»-ն անկրճատելի էր, ի տարբերություն հայերենի: Ռուս-արևելյան բանակային ռազմիրատ-բանակցությունների ողջ իմաստն էր՝ որ էդ «տվոյու»-ն ընդհանրապես ու է, քո մայրիկի՛ն չի դիպչում: Չէ, իհարկե, ընդհանրապես չէր, ֆրանսական էլ չէր, հենց քո ազգուտակն էր ջնջում-ջնջում, չկասկածես: Օտարալեզու քֆուրներն ավելի անհետևանք կարելի է վերարտադրել, իրենց քֆուրականությունը կարծես կորցնեն, կարծես իսկույն ընկղմվեն լեզվաբանական հետազոտության դաշտ՝ օտար, քեզնից հեռու, որի համար դու պատասխանատու չես (ատվեչայ չես), կարծես երբ ռմբակոծում են Սիրիան, ո՛չ թե քեզ, դրա համար, ասենք, *ֆաքը* կամ *ֆաքըրը*ը հայկական ֆեյսբուքում բացարձակապես խնդիր չէ:

Ռուսերենի հետաքրքիր հատկանիշներից է նաև, որ քֆուրները վաղուցվանից օգտագործվում են տղաների և աղջիկների, տղամարդկանց և կանանց կողմից հավասարապես, տղամարդիկ գրեթե չեն ամաչում կանանց ներկայությամբ քրֆել, նույնիսկ հաճախ կանայք են քրֆում՝ տղամարդկանցից է՛լ ավելի հաճույքով և կրքով: Գուցե կանայք այդպիսով ինքնահաստատվում են մասկուլին աշխարհում: Թեև երբ փոքր էինք, զարմանում էի, երբ աղջիկները քրֆում էին (դե, հայոց աշխարհում՝ հազվադեպ տղաների (իմ) առջև). չէ՞ որ ֆիզիկապես նրանք անկարող էին իրենց քֆուրն ի կատար ածել¹: Էլի ռեֆերենտի հարցը: Խոսքի ու գործի միասնության – և՛ անպատասխանատու բաժանվածության – հարցը: Խոսքն ու գործը պիտի հնարավորինս միասնական լինեն, – ասում էր ներդաշնակության իմ փիլիսոփայությունը: Մպառնալիքը՝ գոնե տեսականորեն իրագործելի: Մի անգամ մի աղջկա ռիսկ արի, հարցրի, և նա բացատրեց ինչպե՛ս կարելի է դա անել՝ չնայած ֆիզիկական «սահմանափակմանը»: Պարզվեց՝ տարբեր ձևերով: Ի վերջո, ռուս ռստիկանները կտտանքի են ենթարկում այսօր զեկերին հաճախ հենց այնպես, ինչպես աղջիկը կարող է ի կատար ածել իր քֆուրը. կոպալը կամ շվաբոան ու... կոխելով:

1 Ինչպես իրավացիորեն նշեց Էվիյա Հովհաննիսյանը՝ ոչ բոլոր դեպքերում, օրինակ, հազվադեպ հանդիպող կանացի սեռական օրգաններին վերաբերող հայոյանքներ էլ կան՝ «պ...ցս լիզես»:

the attempt to use these words without “really” targeting the listener or anybody in particular. Often it is claimed that *Yob tvoyu mat’* (literally translates as “f*ck your mother”) no longer refers to you though one cannot leave out the word “your,” as one does in Armenian. The English “motherf*cker” is apparently a similar compromise.

The whole point of many *razbirats* (slang term for “settling of scores based on the rules of criminal culture”) common to the Russian/Eastern militant cultures was to prove that the determiner “your” is used in a figurative sense and is not directed at your mother as such. As a matter of fact, it was not used in a figurative sense, it was not “the French thing” either, it simply was about humiliating you via targeting your kinsmen, no doubt about it. Foreign swear words are easier to reproduce as if they are losing their cursing power and making you delve into the field of linguistic research which is distant from you so that you assume no *atvechay* (criminal slang term for “responsibility”) for it. Just as when Syria is being bombed and not your country, the use of English words “f*ck” or “f*ckable” in the Armenian segment of Facebook today by men and women does not seem problematic at all.

One of the striking features of Russian culture is that swear words have long been used equally by boys and girls, men and women. Men are almost never shy about swearing in front of women. Women often curse with even greater pleasure and passion than men. Maybe this is how women assert themselves in the masculine world. However, when I was a kid, it always surprised me to hear women swear (in the Armenian realm they did so very rarely in front of men). They were physically unable to put their swear words into action after all.² Once again the question arises as to whom swear words refer to. It comes down to the unity of word and deed and to their irresponsible disconnection. My adolescent logic of harmony suggested that words and deeds should be as connected as possible. Any threat had to be at least theoretically feasible. Once I ventured to ask a girl about this, and she explained how it might work despite physical “limitations.” It turned out there were different ways. After all, today the Russian police torture the *zeks* (Russian slang term for “camp inmate”) in the same way that a girl can put her swear words into action, that is by shoving a mop or a baton up a man’s ass.

In Russia, free public use of profanity started in times immemorial. Back in my student days in Moscow (1985-1988) I noticed that parents (including mothers) didn’t mind their teenage children swearing in their presence. At least the elusive boundary between acceptable and unacceptable swearing was more playful and slippery. I noticed that Russian was sexier than Armenian, probably because sex

Ռուսերենում քֆուրների հանրային թագադրումը վաղուցվա պրոցես էր. դեռ Մոսկվայում ուսանելու տարիներին (1985-1988) նկատեցի, որ այնտեղ ծնողները (ներառյալ մայրերը) դեմ չեն, երբ իրենց պատանի զավակները քրֆում են իրենց ներկայությամբ, համենայն դեպս՝ թույլատրելի և անթույլատրելի քֆուրների դժվարամատչ այդ սահմանը խաղացկուն էր, պլստան: Նկատեցի, որ ռուսերենն ավելի սեքսուալ լեզու է, քան հայերենը, գուցե որովհետև սեքսն այդ մշակույթում շատ է և «ազատ»: Բայց որ այդ «ազատությունը» պատմական ճորտատիրության պատճառով է, ինչպես ասում են որոշ հետազոտողներ՝ համը փչացնում է: Իսկ գուցե՝ որովհետև այսօրվա մեծ մշակույթի լեզու էր, որով ասվում էր շատ ավելի բան, քան իմ լեզվով, որով տեքստ քիչ է պահպանվել մարդկանց և տեքստերի ոչնչացման պատճառով, թեև հին է շատ: Մինչդեռ ես այդ ոչ մայրենի լեզվին տիրապետում էի, Սովետի շնորհիվ, գրեթե կատարելապես: Ես այս պահին գրում եմ սա՝ այնպես զգալով, ասես գրեթե առաջին անգամ է հայերեն այսպիսի տեքստ գրվում, մինչդեռ նույն այս պահին լիքը տեքստեր հենց այս հարցերի վերաբերյալ ստեղծվում են ռուսերեն: Տեքստեր այս հարցերի վերաբերյալ ստեղծվել են բազում-բազում՝ նաև այլ լեզուներով. չեխերեն կամ ֆրանսերեն կամ անգլերեն.

Тотальность и гомосексуальность неотделимы друг от друга. Погибая, субъект отрицает всё, что не является ему подобным. В условиях общественного строя, ставящего во главу угла принцип мужского господства в чистом виде, сглаживается противопоставленность сильного мужчины и покорного юноши. Превращая всё вокруг, в том числе якобы субъектов, в объекты, принцип этот обращается в тотальную пассивность, образно говоря – в женственность.

Ադոռնո²

Նույնիսկ Ադոռնոն, Ադոռնոն՝ն, – թեև ուժեղ է ասել՝ բայց ... «Իր ժամանակների» զոհ են իր արժեքները: Չի կարողացել ձևակերպել, որ խոսքը ոչ թե իրական կանացիության մասին է, այլ բռնի իշխի երազանքի՝ «օբյեկտներին» «կզցրած» ունենալ ու պահել:

² As Eviya Hovhannisyan rightly pointed out, this is not always the case. Though rare, there are also examples of expletives that women can address to others with a potential to put the words into action. For instance, “lick my c*nt.”

² Ադոռնոն, Թ. (1944). *Minima Moralia*. <https://arzamas.academy/mag/1099-adorno> (ռուսերեն):

abounds in their culture, and it is “free.” The fact that some researchers say this “freedom” has its roots in serfdom, spoils one’s excitement. The Russian language is well adapted to great modern culture, allowing me to articulate many more things than in my own language; though my language is old, fewer Armenian texts are available due to the destruction of the people and their written heritage. As I am writing these lines now, it seems to me this is the first text written in Armenian on this subject (the knot of sex, swearing, violence and masculinity); whereas, at the moment a large number of texts are being created on these issues all over the world. A great deal has been written about it in other languages, for instance, in Czech, French, or English.

Totality and homosexuality belong together. (...) The opposites of the strong man and the compliant youth fuse into a social order, which unreservedly asserts the masculine principle of domination. By making everyone, without exception – even presumed subjects – into its objects, it recoils into total passivity, virtually into what is feminine. – Adorno³

Even Adorno himself fell into this trap... Though it’s very well put, his ideas fell victim to “his time.” He failed to articulate that it is not a question of true femininity but of the desire for violent power to put down its “objects.”

...the soldiers’ll be trained in field shooting, they’ll brawl with the Hungarians and we shall go gaily to the Carpathians. The Hungarians’ll come here to Budejovice to do garrison duty and the races’ll get mixed. There’s a theory that raping girls of another nationality is the best recipe against degeneration. The Swedes and Spaniards did it during the Thirty Years’ War, the French under Napoleon, and now, in the Budejovice region, the Hungarians’ll do it too; and it won’t be rape with gross violence. Everything will be all right in time. Fair exchange is no robbery. A Czech soldier will sleep with a Hungarian girl, an unfortunate Czech girl will take a Hungarian Honved⁴ into her bed, and centuries later there will be an interesting surprise for the anthropologists: why did people with protruding cheekbones appear on the banks of the Malše? – Hašek⁵

Yes, this is without a doubt the power of genius and fiction. No matter what “time” we live in, not one iota of “Švejk” needs to be changed.

3 Adorno, T. (1944). Minima Moralia. <https://www.marxists.org/reference/archive/adorno/1951/mm/ch01.htm>

4 Defender of the homeland (Hungarian).

5 Hašek, J. (1973). *The Good Soldier Švejk* (translation from the Czech by Cecil Parrott).

Наши солдаты тем временем наловчатся в стрельбе и передерутся с мадьярами, и потом мы весело отправимся на Карпаты. А в Будейовицах разместят мадьярский гарнизон, и начнётся смешение племён. Существует такая теория, что изнасилование девушек другой национальности – лучшее средство против вырождения. Во время Тридцатилетней войны это делали шведы и испанцы, при Наполеоне – французы, а теперь в Будейовицком крае то же самое повторяют мадьяры, и это не будет носить характера грубого изнасилования. Всё получится само собой. Произойдёт простой обмен: чешский солдат переспит с венгерской девушкой, а бедная чешская батрачка примет к себе венгерского гонведа³. Через несколько столетий антропологи будут немало удивлены тем, что у обитателей берегов Мальши появились выдающиеся скулы.

Հաշեկ⁴

Այո, դա՛ է, անտարակույս, հանճարի և գեղարվեստի ուժը. ինչ «ժամանակ» էլ լինի՝ «Շվեյկ»-ի մի տառն իսկ ուղղելու կարիք չկա:

Ինչ-որ պահից ռուսերեն բանավորում և համացանցում քրֆելուց չամաչելը դարձավ համատարած, մասն էր ռուսալեզու հանուր, նաև գրավոր դիսկուրսի «ցածրացման», գոեհեկացման, ինչը նաև սովետականացման, գուլագացման և հետո պոստինացման պրոցես էր, Գասան Գուսեյնովի կողմից անվանված՝ «կլոակային լեզու»⁵: Խամստվոն (boor, cad, lout, twerp)՝ հայերեն գրեթե անթարգմանելի (բիրտ անտաշություն դիմացինիդ հանդեպ), դարձավ ռուսերեն հաղորդակցության նորմալ ձև՝ պաշտոնականից մինչև «գիտական» և գրավոր. մարդիկ զարմանում են, որ դա կարող է ընկալվել որպես վիրավորանք, երբ այդ ոճով են գրում սոցցանցերում:

Ռուսաստանում հաճելի էր աղջիկների ազատ վարքը, ծնողների և զավակների միջև ավելի փոքր տարածքը, քան Հայաստանում: Ասես ծնողը քույրդ լինի կամ եղբայրդ, ոչ թե իշխանդ. քեզնից ոչ իմաստուն, քո չափ հուզվող, քեզնից բան (կյանքի դաժանությունը) չթաքցնող, երբեմն էլ նույնիսկ քեզնից օգնություն ակնկալող, նույնիսկ երբ փոքրիկ ես: Սակայն

3 Հայրենյաց պաշտպան (հունգարերեն):

4 Հաշեկ, Յ. *Քաջարի զինվոր Շվեյկի արկածները* [Гашек, Я. Похождения бравого солдата Швейка (перевод . Г. Богатырёва)]:

5 Գուսեյնով, Գ. (2020). «XXI դարի ռուս քաղաքական հոետորաբանության մեջ ինքնաբերական փորձի մասին» [Гусейнов, Г. (2020). “Об одном невольном эксперименте в русской политической риторике XXI века”]- <https://magazines.gorky.media/nz/2020/4/ob-odnom-nevolnom-eksperimente-v-russkoj-politicheskoy-ritorike-hhi-veka.html> (ռուսերեն):

At some point in spoken Russian and on the internet, it became common not to shy away from swearing; this was a part of the process of “degradation” and vulgarization of all forms of Russian public discourse, also affected by Sovietization, Gulagization and Putinization – a phenomenon that Gasan Gusejnov calls “cloacal language.”⁶ *Khamstvo* (Russian word for “rude and boorish behavior”), which is almost untranslatable into Armenian, has become a normal form of Russian communication, from official to “scientific” and written language. It surprises many Russians that the way they communicate on social networks can be perceived as offensive by non-Russians.

In Russia, I liked the free-spirited behavior of girls and the smaller distance between parents and children compared to Armenia. As if your parent was your sister or brother rather than your ruler; not wiser than you, as susceptible as you are to the lifeworld’s influences, concealing nothing from you (the hardships of life), and sometimes seeking your help even though you were still a kid. The other side of the coin was that such a relationship resulted in the infantilization of parents rather than the democratization of children’s environments. This “equality” was mixed with *khamstvo* that people didn’t notice. The *khamstvo*-ization of (internet) discourse can be viewed as a degenerative democratization, a denaturation of people’s freedom, when there is no class system, and only the underclass exists. The *khamstvo* of power adds up to this phenomenon, shaping and controlling the *khamstvo* of “mere mortals.” The current *khamstvo* of power has its roots in the Soviet system and the Gulag. Its essence is that man is of no value. That’s the main focus of this text.

The usual way of “neutralizing” swear words is to suggest turning them into ordinary, supposedly “innocent” and “emotional” modal expressions. Whereas I would suggest the French way of achieving this goal, that is using several keywords related to sexuality in their literal meaning. Saying “d*ck” instead of “penis,” “f*ck” instead of “intercourse,” etc. Neutralizing swear words by declaring them merely modal expressions represents a compromise and a flawed approach as they will never cease to be demeaning and potentially insulting, and to connote *khamstvo*. Even if you defy authority and thus pretend to free yourself from it by using foul language, chances are that you will also insult a person walking past you and hearing what you just uttered, because you overstep the bounds of what distance should be kept between people. Likewise, by spitting in the street, you insult a passerby even though you didn’t intend to do so (supposedly) or didn’t even notice him or her. Supposedly. That’s the trick.

Using high-flown scientific euphemisms to refer to this “tabooed” part of

6 Gusejnov, G. (2020). “On an Involuntary Experiment in 21st-Century Russian Political Rhetoric” [in Russian]. <https://magazines.gorky.media/nz/2020/4/ob-odnom-nevolnom-eksperimente-v-russkoj-politicheskoy-ritorike-hhi-veka.html>

այդ հարաբերության մեջ եղած պոտենցիալ լավն այլասերվեց, դարձավ ծնողի ինֆանտիլիզացիա, ոչ թե երեխայի միջավայրի դեմոկրատիզացիա: Միավորվեց խամսավո-ին որպես ոչ թե առանձին խավերի կամ անհատների վարք, այլ՝ գրեթե համատարած: (Համացանցային) դիսկուրսի *խամսավոյացումը* կարելի է համարել դեգեներացված դեմոկրատիզացիա՝ մարդկանց ազատության *դեկլասսիֆիկացիա*, երբ այլևս դասակարգեր և խավեր չկան, այլ կան միայն *դեկլասսированные элементы*: Բայց դրան գումարվում է իշխի հատուկ խամսավոն, որը և եղանակավորում է «սովորական» մահկանացուների խամսավոն, առաջնորդում այն: Իշխի այսօրվա խամսավոն գալիս է Սովետից՝ Գուլագից: Դրա էությունն է՝ մարդն արժեք չունի: Դա՛ է այս տեքստի շեշտը:

Քֆուրների ամենամեծ խնդիրն այն է, որ դրանց «չեզոքացման» ուղին համարվում է դրանք սովորական, իբր «անմեղ», «էմոցիոնալ» «եղանակավորող բառ» դարձնելը: Մինչդեռ դրանց իրական չեզոքացման իմ առաջարկած ուղին կլինե՛ր լրիվ այլը՝ ֆրանսականը. եթե այդ մի քանի բանալի բառը՝ սեռականությանն առնչվող, սկսե՛ին օգտագործվել իրենց ուղղակի իմաստով՝ սեռականությունն արտահայտելիս: Առնանդամի փոխարեն ասվե՛ր կ..., կենակցելու՝ ք..., և այլն: Որպես եղանակավորող բառ դրանց չեզոքացումը կոմպրոմիսային է և անկատար. դրանք չեն կորցնի լսողին նվաստացնող իրենց իմաստը, նրան վիրավորելու պոտենցիալը, խամսավոյի նշան լինելը: Նույնիսկ եթե դու մարտահրավեր ես նետում իշխին և այդպիսով քո արևին ազատագրվում՝ այն քրֆելով, իսկ կողքիդ մեկը պատահաբար լսում է՝ նրան է՛լ ես վիրավորում, քանի որ սահմանը հատում ես նրա ցանկության՝ թե որքա՛ն մերձ է ուզում լինել քեզ: Ինչպես որ փողոցում թքողը վիրավորում է կողքից անցնողին, թեև (իբր) նրան չէր թիրախավորում և նույնիսկ չի էլ, իբր, նկատում: Շենց ա՛յդ է, որ՝ (իբր) չի՝ նկատում:

Եվ կյանքաշխարհի այդ մասը նշելու համար դրանց փոխարեն գրական կամ գիտական վերամբարձ էվֆեմիզմներ օգտագործելը նույնպես կոմպրոմիս է: Կա՛ն այդ բառերը, դրանք նշանակում են ա՛յս, ա՛յս, ա՛յս, դրանք պիտի զրկվեն սակրալացումից, տաբուացումից և որպես վիրավորանք օգտագործվելու պոտենցիալից: Օգտագործվեն զուտ իրենց ուղիղ իմաստով:

Շեշտոցը՝ պ... կոչվի, մետոնիմիան, երբ անցնող աղջկա մասին իրար ասում են «լավ պ... էր», կդառնա լրիվ անմեղ, գուցե էլ կարիք չլինի նորաստեղծ «ծիտ» էվֆեմիզմի և ֆեմինիզմի *իբրական* (երբ «ծիտ» տղերքին են ասում): Հայերեն տղուն «կ...» չեն ասում՝ «պինդ կ...» է կամ նման բան, ոչ տղեքը, ոչ աղջկեքը:

Կա, իհարկե, մի ձև. «ընդունել» աշխարհը: Ընդունել, որ փոքր ժամանակ մարդիկ դաժան են, որ մեր փոքր ժամանակ «սեռական դաստիարակություն» չկար, ընդունել, որ կյանքաշխարհում ամեն ինչ

the lifeworld is also a compromise. These words exist and they have a precise meaning. Therefore, they should be stripped of sacred connotations, taboos as well as offensive potential. They should be used exclusively in a literal sense. Once a vagina is called a c*nt, the metonymy “what a pretty c*nt” used to refer to a girl passing down the street will sound perfectly innocent. Perhaps then there would be no need either for this new euphemism *tsit* (Armenian slang word for “sexy person,” which literally translates as “bird”) or for distorting its feminine meaning (when boys are called *tsit*). In Armenian no one calls a boy a “d*ck” – neither boys nor girls. I am not against *tsit* which is more innocent than c*nt, obviously. I am not against metaphors; they enrich language enormously. I am against taboos that hide derogatory words but do not resolve the issue of the insulting meanings that underline them.

A widespread “forced landing” solution to this problem is to “accept” the world as it is. Accept that young people are, as a rule, often cruel, and when they become adults they bury their experiences of cruelty in their psyche, as if it has not happened. Yes, there was no “sex education” in our schooldays. Accept that anything can happen in this lifeworld but it doesn’t mean this world is a wrong thing. I am ready to adapt, I have adapted so many times, it’s no big deal... I am either magnanimous or weak. Accept that people have existed, exist, and will cease to exist one day (the mechanism will stop functioning), new ones will be born, it’s the natural order of things, but then does this imply that if we accept this dull epic cycle of life and death, our projects become meaningless? What is the point of striving for something, of trying to make the world a better place if you have to accept this crazy fact that though you are filled with a crazy desire, it should be taboo, and that there is a culture of humiliation and that you have to pretend that it’s “normal”; it is just a sign of masculinity, a rite of passage, no matter if it takes place at school, in the army or in a war. If you stay alive, you will be psychologically handicapped: that’s the way of human civilization – to produce psychologically handicapped people. Only those who know they are psychologically handicapped are not psychologically handicapped.

As a teenager, I used to shout in my mind, “I want a girl,” just like the uncle of the main character in *Amarcord*: he escaped from a mental asylum, climbed a tree, and kept shouting, “I want a woman.” Nobody could handle him until a small nun arrived and ordered him to climb down from the tree which he did obediently. “I want a girl,” I shouted in the wilderness, bewildered, whereas the adults considered it to be the legitimate first signs of a normal boy’s crush. Fellini kind-heartedly mocks sex in his films. Perhaps this is the best way to understand and portray sex. My mother adored him for that as well. Although Fellini is a genius, isn’t it kind of a cop-out and a clever way to exhaust a subject or circumvent a taboo? Making fun of sex is not that difficult after all... The combination of toilet and sex in *Amarcord* is superb, as evidenced by the way the guy called “Eau de cologne”

էլ կպատահի, բայց դա չի նշանակում, որ այն սխալ է, ընդունել նաև հակառակը. որ եթե մարդիկ ուզում են, որ իրենց այսինչ կերպ անվանեն, ոչ թե այնինչ կերպ՝ իրենց իրավունքն է: Ես համաձայն եմ հարմարվել, եղբա՛ն բանի եմ հարմարվել, դա ի՞նչ մեծ բան է, որ... – ես մեծահոգի եմ կամ՝ թույլ: Ընդունել, որ մարդիկ եղել են, կան և կգնան (մեխանիզմը շարքից դուրս կգա), նորերը կգան, և աշխարհի բանն է դա: Բայց այդ դեպքում, կյանքի և մահվան այդ անդեմ, էպիկական այդ ցիկլն ընդունելու դեպքում արդյո՞ք մեր գրեթե ցանկացած պրոյեկտ չի իմաստագրվում: Էլ ի՞նչ իմաստ ունի ձգտել ինչ-որ բանի, փորձել փոխել աշխարհը դեպ լավը, եթե պիտի ընդունեն այն գծական փաստը, որ կա քո միջի գծական կիրքը, սակայն այն պիտի տաբուացված լինի, և որ կա ստորացման մշակույթը, սակայն պիտի ձև թափես, ասես դա է՛լ է նորմալ բան՝ տղամարդկայնացման, ինիցիացիայի միջոց – դպրոցում թե բանակում թե պատերազմում: Եթե սաղ մնացիր՝ կմնաս հոգեբանապես հաշմ, և հենց դա՛ է այս քաղաքակրթության միջոցը. հոգեբանապես հաշմ մարդկանց արտադրել. որոնք հոգեբանապես հաշմ չեն միայն՝ եթե գիտեն, որ հոգեբանապես հաշմ են:

Դեռահաս՝ մտքումս գոռում էի. «Աղջիկ եմ ուզու՛մ», ինչպես «Ամառկոռո՞ղ»-ում հերոսի գիժ հորեղբայրը, որ հոգեբուժարանից փախչում, մագլցում է ծառը և գոռում. «Կին եմ ուզու՛մ»: Կիկոսի ֆելլինիյան տարբերակը: Ոչ ոք չի կարողանում իր հախից գալ, մինչև որ թզուկուհի իր բուժքույրն է գալիս, հրամայում, որ ծառից իջնի, և հորեղբայրը խելոք-խելոք իջնում է: «Աղջիկ եմ ուզու՛մ», – գոռում էի ես անապատին, իսկ մեծահասակները կարծում էին՝ նորմալ տղայի սիրահարության լեզվախմբի առաջին շորշոփներն են: Ֆելլինին բարիորդն է ծաղրում է սեքսն իր ֆիլմերում: Երևի, դա լավագույն ձևերից մեկն է, ինչ կարելի է անել, երբ սեքսն ես ուզում հասկանալ, պատկերել: Մայրս նաև դրա համա՛ր էր պաշտում իրեն: Բայց, թեև Ֆելլինին հանճար է, մի քիչ փախուստ չէ՞ դա, թեման հեշտությամբ սպառել չէ՞, տաբուն շրջանցելու խորամանկ միջոց... Եկե՛ք ծաղրենք սեքսը, ի՞նչ մի մեծ բան է... Զուգարանայինի և սեքսի միավորումն «Ամառկոռո՞ղ»-ում կատարյալ է, Օ-դե-կոլոնի կողմից հարուստուհու մատանին կոյահորում փնտրելը վկա: Օ-դե-կոլոնը քաքն է նվիրում, առաջարկում աշխարհին՝ կտոր առ կտոր: Բացահայտում, մերկացնում. մարգարի՛տ եք ուզում գտնել. քա՛քը պիտի ուսումնասիրեք, մի՛ խորշեք: Из какого сора растут стихи, не ведая стыда... Մարագինայի պարում սեքսի ծաղրը հանկարծ, իհարկե, դառնում է տարտառու: Նույնը՝ «Կազանովա»-ի որոշ դրվագներում: Ֆելլինին կիսատ է թողնում խորանալը, նշանը տալիս և դրադ քաշվում – մնացածը ձեր մեջ ռեֆլեքսեք: Ես՝ սովետական դիսիդենտ հրապարակախոսությամբ դաստիարակվածս, ուզում եմ այդ կիսատը լրացնել, մինչև խորքը գնալ, երեսպաշտությունը մերկացնել և գամել խայտառակության պատին, ինչպես Լենինը Ռոզա

empties the cesspit in search of a rich woman's ring. "Eau de cologne" offers the world excrement piece by piece. He reveals the simple truth that you have to dig into excrement in search of pearls, it shouldn't put you off. *If you only knew what kind of trash poems shamelessly grow in* (Akhmatova)... The mockery of sex in Saraghina's dance suddenly becomes diabolical. The same is true of some episodes in *Casanova*. Fellini stops delving into the problem after giving some helpful hints, and steps aside, letting you ponder the rest. As someone who grew up on Soviet dissident literature, I wish to fill the gap, making every endeavor to delve deeper, expose hypocrisy and condemn it as vigorously as Lenin treated Rosa Luxemburg⁷. Needless to say, I am blamed for hypocrisy as well; some people call me a "lazy hypocritical bourgeois" who is blind to the merits of real sufferers and used to publicly discuss and peddle personal "little tragedies" the size of a mustard seed. Until the plague has swept away the world. *A prophet has no honor in his own country*. Especially if your country is the whole of humanity.

An object. While chatting with a girl, I didn't want to get to know her as much as I wanted to explain to her how I perceived the world. So that she could accept and love me as I am. It took many years before I could unravel the mystery of getting to know a girl as a person. Because if I perceived her as a friend, it implied that she was not sexually attractive and the future was going to be a relationship without sex. Sex immediately, at the beginning of the relationship, was what my nature required. Probably that's what scared girls and they walked out on me. Dating, engagement, and marriage? What a waste of time! Just sex immediately, for starters. I didn't realize that they expected me to behave differently. When I did, I also realized that this knowledge is a tool to "tame" girls as objects; it applied to "all girls," rather than a specific person. You just had to cheat, concealing your intentions, and flirting with them instead, as if setting the hook to catch fish. The only problem was that girls were better at this game; they "dynamoed" (Russian slang term for "cheating" or "backing out") you by fooling you and getting flirty without satisfying your desires.

Profanity, violence, humiliation, and sex, filling the space between the real and the theatrical, participated in a complex interplay. Swear words were well camouflaged so that their exact meaning no longer peeked out although everyone knew what they conveyed. Sex was either hidden behind scientific terms or present as humiliation, a "natural" manifestation of manhood, a rite of passage, a sacrilege, or a ritualistic marriage. The enigma, the real essence of sexuality and love was hidden behind all these layers. People didn't understand it, they hid from it without even trying to understand. The civilized world is wrapped in multiple

7 There was a joke in the Soviet times: 'Lenin exposed Rosa Luxemburg, put her against the wall and showed her weak points.' In Armenian 'weak' or 'vulnerable points' is խոցելի – literally meaning penetrable or pierceable.

Լյուքսեմբուրգի հետ էր վարվում: Թեև երեսպաշտությունն անսպառ է, և ինձ էլ «երեսպաշտ անդարդ բուրժուա» անվանողներ կան, ինձ էլ իրական տառապողների դադրը չտեսնող, իմ փոքրիկ, մանանեխահատիկի չափ տրագեդիաները մեյդան հանող և դրանցով առևտուր անող համարողներ կան: Քանի դեռ ժանտախտը, իբր, ողջ աշխարհը չի կալել: Չկա մարգարե իր հայրենիքում: Մանավանդ եթե հայրենիքդ ողջ մարդկությունն է:

Օբյեկտ: Նույնիսկ շաղակրատելիս ես ոչ այնքան ուզում էի աղջկան ճանաչել, որքան՝ բացատրել իրեն, թե ինչպես եմ ե՛ս ընկալում աշխարհը: Որ ինձ սիրի, ընդունի, ինչպես որ կամ: Շա՛տ տարիներ անցան, մինչև աղջկան որպես մարդ ճանաչելու առեղծվածը գոնե մի՛ քիչ կարողացա լուծել: Որովհետև եթե նա ընկեր էր, և ճանաչում էի՝ ուրեմն սեքսուալապես հետաքրքիր չէր, անսեքս էինք շփվում: Սեքսը՝ սկզբում: Դա էր, վաղ թե, վախեցնում աղջիկներին, յան էին տալիս: Ի՛նչ ժամադրություն, ի՛նչ փեսացություն, ի՛նչ ամուսնություն – սեքսը՝ սկզբու՛մ: Ես չէի հասկանում, որ նրանք այլ տիպի վարք են սպասում: Երբ հասկացա, դա էլ՝ աղջիկներին որպես օբյեկտ «ընտելացնելու» ձև էր, քանի որ դա «բոլոր» աղջիկներին էր վերաբերում, ո՛չ թե որոշակի մարդու. պետք էր խաբել, թաքցնել՝ իրականում ի՛նչ ես ուզում, ֆիլրտ անել, ձուկ բռնելու պես՝ կարթը խաղացնել. ուրիշ բան, որ այդ պոկերն իրենք ինձնից լավ էին խաղում և, իհարկե, «դինամո» էին անում, ֆոցնում՝ ֆլիրտը ստանալով, իսկ իմ ուզածը՝ չտալով:

Քֆուր, բռնություն, ստորացում և սեքս – այդ ամենի՛ կյանքի իրականության և շինծու թատրոնի միջև հարաբերությունները բարդ էին, քֆուրները՝ միմիկրիա արած շատ և շատ ձևերով՝ որ իրենց հիմքում ընկած գլխավոր բառերն այլևս չծիկրակեն իրենց միջից, թեև բոլորը գիտեն՝ ինչի՛ մասին է խոսքը, սեքսը՝ գիտական կամ գրական տերմինների հետևում ծվարած, բռնությունն ու ստորացումը՝ իբր տղաների հասունացման, «ինիցիացիայի» «նորմալ» պրոցես, - աշխարհը հազար և մի կաղամբյան «շորիկ» էր իր գլխին հագել, որ տաբուացված իրականությունն ինքն իրենից թաքցնի. որոշել ու որոշում էր, իբր, թե կանոնն ինչ է, դրա խախտումը՝ ի՛նչ, և Լոուրենսի, Միլլերի կամ Բուկովսկու պես ապստամբների հախներից գալու միակ միջոց էր խորամանկագույն այդ ձևը՝ կանոնի մեջ նրանց ընդգրկելը, դասականացնելը. «քաղաքակիրթ» աշխարհի կողմից տաբուացվածին դեմադրեմ դուրս գալու հեղափոխության վերջին դավաճանությունը, օրուելյան կեղեքիչ կապիտալիզմի ծուղակի գլխավոր կիրառուկը՝ կոռպտացիան:

Պետք էր հասկանալ կնոջը, և դա արդեն սխալ ձևակերպում էր, վանդակված սեփական ցիսգենդերության մեջ՝ պիտի հասկանայի ո՛չ թե կնոջը, այլ դիմաց եկող ամեն մարդուն, ինչու՛ ես չէի ուզում նույնպես հասկանալ «տղամարդուն»: Բայց կինը մարդ է՝ բայց որին «ցանկասիրում

layers of clothes to hide a reality full of taboos; it claims to govern the order of things by setting the rules and determining the limits of their violation. The cunning plan to deal with rebels like Lawrence, Miller or Bukowski was to recognize them as respectable parts of the canon and turn them into classic authors. This embodied the “civilized” world’s last betrayal of the rebellion against taboos, the last trap of despotic capitalism, the Ingsoc best described by Orwell, when rebellion is left toothless via co-optation into “high culture.”

One should understand a woman. This is by definition an incorrect statement trapped in one’s cis-genderness; the real issue was not to understand a woman but every person I encountered. How come I didn’t wish to understand a man as well? A woman is a human being but one that I desire. I should understand each creature I encounter – this child, this woman, this boy, this girl, this old man, this old woman, this dog, this cat, this mosquito, this tree, this stone, this hedgehog, this alien, and this leaf. Any generalization was an erroneous abstraction, although inevitable, because it constituted the central feature in each layer of language, forming its basis. Brodsky defined Platonov’s prose so well: “Platonov reveals the absurdity of language already contained in its grammar.”⁸ By the word “woman” we meant some vague and generalized creature that could be ugly, beautiful, old, young, outer, inner, have upper and lower parts, be a mother, a non-mother and a grandmother, etc. For centuries human civilization instilled these categories in us, so from the day I was born I have been taught to accept them unconditionally and live in this forest of uncertainties and simulacra. Meanwhile, “they” gladly accepted this hypocritical flirtation as well, by seeking male attention, dead flowers, etc. Grammar jumps through hoops to prevent us from saying “he/she” over and over again so that every time we say “man” we overlook the fact that a woman is a human being too. Like *The Adventures of Huckleberry Finn* which was banned in some U.S. school districts because of the N-word, the entire history of humankind together with all the texts ever produced should be revisited. It all went horribly wrong. As I adapted myself to the world of profanity, violence, humiliation, and sexuality full of taboos, so did “they”; the political economy of the old world taught “them” that once they gave birth to a child, they had to carry out solely domestic duties, while men were considered hunters. “They” learned how to sew and cook, while men knew how to handle a hammer and fix a bathroom leak. They give birth to a child; they are softer and have less body hair than men (until recently they have been concealing the fact that they shave their bodies). Apart from having slightly different bodies and being physically softer than men, “they” didn’t manage to become writers for centuries, only a few of them joined the army, and there were

ես»: Պետք էր հասկանալ յուրաքանչյուր արարածին՝ դեմըս ելնող, այս երեխային, այս տղամարդուն, այս կնոջը, այս տղային, այս աղջկան, այս ծերունուն, այս պառավին, այս շանը, այս կատվին, այս մժեղին, այս ծառին, այս քարին, այս ոգնուն, այս այլմոլորակայինին և այս տերևին: Ցանկացած ընդհանրացում սխալ էր, իսկ ընդհանրացումները՝ անխուսափելի. լեզվի ամեն շերտի գլխավոր հատկանիշ, լեզվի գոյության հիմք: Բրոդսկին լավ էր ձևակերպել Պլատոնովի արձակը. «Ցույց է տալիս լեզվի արտաբերող հենց քերականության մեջ»⁶: «Կին» ասելով հասկանում էինք ինչ-որ մի անորոշ ընդհանրական արարած, տգեղ, գեղեցիկ, տարեց, երիտասարդ, արտաքին, ներքին, վերև, ներքև, մայր, չմայր, տատ, - և այդ բոլոր կատեգորիաները քաղաքակրթությունը դարերով սերմանել էր, որ ես ծնվածս օրվանից դրանք առանց մտածելու ընդունեմ և ապրեմ այդ անորոշությունների, այդ սիմուլյակների անտառում: Եվ՝ «իրենք» էլ. հաճույքով ընդունել էին երեսպաշտ այդ ֆլիրտը՝ որ պետք է ուզել տղամարդուց ուշադրություն, մեռած ծաղիկ և այլն: Քերականությունը ուստնում էր, մոլեգնում, որ թույլ չտա ամեն անգամ ասել he/she, որ ամեն անգամ «մարդ» ասելիս մոռացնել տա, որ կինն է՛լ է մարդ, և, ինչպես «Հեքլբերրի Ֆինն» էին արգելում ԱՄՆ որոշ դպրոցներում «սևամորթ» բառի հին ձևն օգտագործելու համար, պիտի մարդկության ո՛րջ պատմությունը, բոլո՛ր տեքստերը վերանայվեին: Ամբո՛ղջը սխալ էր գնացել ծայրեիծայր: Ճիշտ ինչպես որ ես էի սովորել հարմարվել ընկղմվելով քֆուրի, բռնության, ստորացման և սեքսուալության տաբուացվածության մեջ, նույն կերպ էլ «նրանք» էին հարմարվել, հին աշխարհի քաղտնտեսությունը «նրանց» ուղղորդել էր, որ եթե երեխա են ծնում, ուրեմն պիտի տան հոգսերով զբաղվեն, իսկ տղամարդը լինի «որսորդը», «նրանք» սովորել էին կարուձև ու ճաշ եփել, տղամարդը՝ մեխ խփել և սանհանգույցը նորոգել, որ ջուրը չկաթի, նրանք երեխան էին ունենում՝ ուրեմն քնքուշ էին, մազածածկույթն էլ՝ տղամարդուց քիչ (իսկ սափրվելը մինչև վերջերս թաքցնում էին), ֆիզիոլոգիան էլ՝ մի քիչ ուրիշ, բայց եթե դա մոռանաս՝ նրանք ո՛չ միայն քնքուշ էին, այլև՝ գրող չէին դարձել դարեր շարունակ, ուսում չէին ստացել, զինվոր քիչ էին եղել, եթե նույնիսկ եզակիները թագուհի եղել էին, էլի հիմնականում տղամարդիկ էին իշխի տերը մեծ մասամբ (կանանց «իշխանավորումն» այս մասկուլին աշխարհում, առանց այն կառուցվածքորեն փոխելու, սովորաբար նրանց մասկուլինացում էր դառնում, այո՝՝ Մարգարեթ Տետչըր), - աշխարհը լրիվ այլ կերպ էր լինելու, լեզուն էլ, գրականությունն էլ, պատմությունն էլ,- եթե ֆիզիկական-քաղտնտեսական պատճառներով նրանք եղած չլինեին բռնաբարվելիք, փող, փոխուտուրսի «անկամ» առարկա, մոնոգամ

8 Ratnikov, K. “Andrei Platonov Through Joseph Brodsky’s Eye” [in Russian]. <https://proza.ru/2020/10/25/1256>

6 Ռատնիկով, Կ. «Անդրեյ Պլատոնովը Իոսիֆ Բրոդսկու գնահատմամբ» [Ратников, К. “Андрей Платонов в оценке Иосифа Бродского”] <https://proza.ru/2020/10/25/1256> (ռուսերեն):

only a handful of queens that were registered in history as important figures; mostly men wielded enormous power (those women who assumed power in this masculine world without changing it structurally usually became masculine too, didn't they? Margaret Thatcher, for instance). The world, along with language, literature, and history would have been different, if they had not been regarded as sexual objects, as “docile” items of wealth and trade in humankind’s political economy that evolved as it did. Monogamy would not have prevailed, if there had been no economic reasons behind it. Or an understanding of health hazards – those pleasant but dangerous liaisons might transmit disease if they are reckless and diverse. That’s the way of the world now. One should revisit it. It’s worth imagining how the world would have looked like if there were as many female writers as there were male ones, or as many as there are now. The Soviet army not only or not so much liberated Europe, as (rather) raped her. The main culprit for the siege of Leningrad was not so much Nazi Germany as it was Stalin and the Soviet regime. Although Bandera and Nzhdeh were nationalists, anticommunists, and Nazi collaborators, they were also national heroes. After all, Vasak Syuni (a controversial figure in Armenian history) was more of a brilliant strategist than a traitor. The Founding Fathers who created the US Constitution were slave owners. One is left to speculate as to whether they were good slave owners or not. Pushkin too was a slave owner, albeit a good one. Apart from debunking all the myths (the myth of Pamfilov’s Twenty-Eight Guardsmen and other lies imposed by the authorities about Soviet or world history), one should demonstrate that the hero and the villain, the top and the bottom have been distinguished in an abstract and false way in the historical texts offered to us. *I’m worm, I’m God* (Derzhavin). People are centaurs; heroism and depravity are intertwined, they come together. While acting “heroically” one was also scared out of one’s wits, and during the attack, nobody shouted: “For the motherland! For Stalin!” The myth that the king of Denmark was wearing a yellow star was a fabrication, whereas the fact that he was a good man was not a lie. The fact that those who helped the Jews to flee Denmark did so for huge sums of money is, however, true too. Well, we learned these lessons very well from our own history of genocide. *The Naked Pioneer Girl* by Mikhail Kononov – in my view, one of the five best novels written since perestroika – based on the true story of a teenage girl suffering sexual abuse during wartime, was soon forgotten.

The literary canon is being (and must be) rewritten: Homer from the perspective of Helen and Penelope, the Minotaur myth from the perspective of Ariadne, *Daredevils of Sassoun* from the perspectives of Lady Khandut and Chimishkik Sultan, *Hamlet* from the perspectives of his mother and Ophelia. It’s a shame that both *Hamlet* and *Rosencrantz and Guildenstern Are Dead* by Stoppard – it would seem that the latter should have offered a female perspective – are written from a male point of view.

ընտանիքը վայ թե չհաղթեր, եթե տնտեսական պատճառը չլիներ ու՝ առողջությունը,- որ այդ հաճելի-սակայն-վտանգավոր լիեզոնից նաև հիվանդություններն են տարածվում, եթե այն անկազմակերպ է, խառը:

Այդպիսով աշխարհը դարձել էր այսպիսին: Պետք էր այն հետ բերել: Պետք էր պատկերացնել՝ աշխարհին ինչպիսին կլիներ, եթե կին գրողները դարեր առաջվանից նույնքան շատ լինեին, որքան՝ տղամարդ կամ որքան՝ իրենք այսօր են շատ: Սովետական զորքը ո՛չ թե, ո՛չ միայն, ո՛չ այնքան ազատագրել էր Եվրոպան, այլ (որքան)՝ բռնաբարել: Լենինգրադյան բլոկադայի մեղավորը ո՛չ այնքան նացիստական Գերմանիան էր, որքան Ստալինն ու խորհրդային իշխը: Բանդերան և Նժդեհը նացիոնալիստ էին, հակախորհրդային, նացիստների հետ համագործակցած և միևնույն ժամանակ՝ ազգային հերոս: Վասակը դավաճան չէր, ի վերջո, այլ խորաթափանց նավարկող: Ամերիկյան Սահմանադրության Հիմնադիր Հայրերը ստրկատեր էին: Մնում էր իմանալ՝ բարի ստրկատեր էին թե չար: Պուշկինն էլ էր ճորտատեր, բայց՝ բարի: Ո՛չ միայն զուտ միֆերը պիտի մաքրվեին (28 պանֆիլովականները, Սովետի – և աշխարհի պատմության՝ իշխի կողմից պարտադրված – ամբողջ սուտը), այլև՝ հերոսն ու ստահակը նույն մարդն էր, վերինն ու ստորինը նույն արարածն էր՝ «я червь, я бог»: «Հերոսության» գնալիս տակդ թրջում էիր, ոչ ոք չէր գոռում «За родину, за Сталина», և «ոչ ոք չէր ուզում մահանալ»: Դանիայի թագավորի՝ դեղին աստղ դոշին կպցնելու լեգենդը սուտ է, իսկ այն, որ ինքը լավ մարդ էր՝ ոչ: Իսկ այն, որ հրեաներին Դանիայից դուրս բերողները նրանցից հսկայական փող էին վերցնում՝ նույնպես ոչ: Դե, մենք աշխարհի այդ դրվածքը լավ գիտենք՝ խորքից, մե՛ր ցեղասպանության պատմությունից: Միխայիլ Կոնոնովի «Մերկ պիոներուհին» (1990-2001), որ, իմ կարծիքով, պերեստրոյկայից ի վեր ռուսերեն գրած հինգ ամենալավ վեպերից է՝ պատերազմի ժամանակ դեռահաս աղջկա օգտագործման մասին, այն էլ՝ վավերագրական հիմքով,- իհարկե, լռության մատնվեց արագ:

Ողջ գրականությունը վերաարտագրվում է կամ պիտի վերաարտագրվի. Հովերոսը՝ Շելենի և Պենելոպեի տեսակետից, Մինոտավրոսի միֆը՝ Արիադնեի, «Մասնա ծոերը»՝ Խանդութի ու Չմշկիկ Սուլթանի, «Համլետ»-ը՝ իր մայրիկի և Օֆելիայի: Ինչպիսի՞ խայտառակություն – «Համլետ»-ն էլ, Ստոպպարդի «Ռոզենկրանցն ու Գիլդենստերնը մեռած են» էլ, որ, թվում է, հենց դրա մասին պիտի լիներ՝ էլի բոլորը տղամարդկանց տեսակետից են: Ահա ձեզ հաղթական կոմերցիոն գաղափար. գրե՛ք «Համլետ»-ն Օֆելիայի տեսակետից, քանի չի գրված, և հաջողությունը երաշխավորված է: Օֆելիան պակաս Համլետ չէ. ինչու՞ է նա գծվում, մի թե նրանից, որ Համլետը սպանեց իր հորը: Թե՛ նրանից, որ խաբում էր Համլետին՝ հոր և սիրածի միջև խաչված: Թե՛ կին-Համլետ եղել է, եթե ճիշտ եմ հիշում, ինչպես և սևամորթ Քրիստոս, իսկ խաչված կին՝ ոչ: Մատը բերանը ճխտած՝ արդեն այդ (տե՛ս հետո),

Here is a winning business idea. Write *Hamlet* from Ophelia's perspective before anyone else goes for it, it will be a great success. Ophelia is no less interesting a character than Hamlet. Why does she go mad? Is it because Hamlet killed her father? Or because she betrayed Hamlet, torn between her love for her father and her lover? There were female Hamlets, if I remember rightly. There was also a black Christ, but no crucified woman. We witnessed a woman with her fingers cut and stuck in her mouth (to which I will refer later), but never a crucified woman. Back in 2002, I made a watercolor of a crucified woman. My son loves this painting, and it hangs on his bedroom wall.

We were centaurs, a combination of nature and artificiality. Human civilization has for centuries wrapped the animal part of our being in social and artificial outfits, without really getting rid of it, and now is the right time for us to break with this tradition, pushing the animal part out as much as possible and rearranging the order of things in a meaningful way. "She is half a man, she's got her father's ears. When you kiss her ears, you kiss her father's ears." Everything is fluid and apt to change, everything is intertwined. There are no barriers, just as there is no traditional top and bottom, no matter how difficult it is to live that way. A more complex scenario is that these barriers are both existent and nonexistent. At times the opposition between the top and the bottom exists, at times it doesn't. If it is intense, you can make it moderate. If it doesn't exist, set it up within reason. Isn't liberalism all about moderation and compromise and isn't this why it is blamed for hypocrisy? "Woman" is a sweeping generalization; we are all human, everyone is an individual. There are genders, there are men and women, and a myriad of gender identities in between.

This can be regarded as an irresolvable absurdity or antinomy. We can try to resolve such antinomies through action, as Kant and Marx suggested. It doesn't matter what you are engrossed in, what matters is how you act. I came out of that meat grinder half tortured, I don't even know how I survived it, or if I survived it. Help your children, if possible, to avoid falling into these traps. Break taboos, don't just prohibit touching things with no explanation. However, I or any other individual child is not the biggest problem. There is a bigger and deeper problem that lies with our beloved civilized world, the liberal "order of things."

My research naturally led me to Solzhenitsyn's *Gulag* and the Gulag. I was fourteen or fifteen years old when I secretly read it at night. A friend of my mother who distributed books by dissident authors gave it to my parents for a couple of days. Many things were permanently imprinted on my mind, including the fact that the *maloletki* (Russian slang word for "delinquent minors"), who were born and/or raised in the Gulag, were the cruelest among the *bespredelschiki* (literally translates as "no-limiters," a Russian slang word for criminals who do not obey any rule and maximize cruelty).

Իսկ խաչված՝ ոչ: Մի անգամ՝ 2002-ին, ջրաներկով նկարեցի խաչված կին, տղաս այդ նկարը հավանում է, իր սենյակի պատին փակցված է:

Մենք կենտավրոս էինք՝ բնություն էինք և արհեստականություն, կենդանական մեր միջուկի վրա հագցվել էին քաղաքակրթության սոցիալական, արհեստական «շորիկները» հազարամյակների ընթացքում, և այժմ պետք էր այդ ամենը վերախմբագրել, կենդանականը դուրս մղել, որքան հնարավոր է, խելքով, գիտակցորեն ամենը վերադասավորել: «Նա կիսով չափ տղամարդ է, նրա ականջը հայրիկի ականջն է: Դու համբուրում ես նրա հայրիկի ականջը»: Ամենը ծորում է, հոսում և միմյանց մեջ է, չկա՝ անջրպետ, ինչպես որ չկա՝ վերև-ներքև, որքան էլ դժվար է այդպես ապրել: Կամ՝ ավելի բարդ. անջրպետը միաժամանակ կա և չկա: Երբեմն վերև-ներքև կա, երբեմն՝ ոչ: Եթե շատ է, քչացրու՝ եթե չկա՝ հիմնադրի՝ ր մի քիչ (լիբերալիզմ, չափավորություն): «Կին»-ը սխալ ընդհանրացում է, բոլորս մարդ ենք, ամեն մեկս՝ առանձին մարդ, սակայն կան սեռեր, կան կանայք և տղամարդիկ, և մեջտեղները՝ հազար ու մի ջենդեր:

Սա կարելի է անլուծելի աբսուրդ համարել կամ անտիսոմիա: Բայց կարելի է և այդ անտիսոմիան փորձել լուծել այնպես, ինչպես Կանտն ու Մարքսն էին առաջարկում. արարքներով: Կարևոր չէ՝ ինչի մեջ ես խճճված, կարևոր է՝ ինչպե՛ս ես վարվում: Ես դուրս եկա այդ մսադաջից կիսախոշտանգված, չգիտեմ էլ՝ ինչպես հաղթահարեցի և հաղթահարեցի արդյոք: Օգնե՛ք ձեր երեխաներին չընկնել այդ ծուղակների մեջ, եթե հնարավոր է: Տաբուները քանդե՛ք, թու՛յլ տվեք ձեռք տալ իրար անմեղորեն: Բայց նույնիսկ դա՝ չէր խնդիրը, դա գեղեցիկ, քաղաքակիրթ աշխարհի խնդիր էր:

Հետազոտություններս, բնականաբար, բերեցին Սոլժենիցինի «Գուլագ»-ին և Գուլագին: 14-15 տարեկան էի, երբ կարդացի գիշերը թաքուն. մայրիկիս ընկերուհին, որ դիսիդենտական գրականություն էր մատակարարում, մի երկու օրով տվել էր ծնողներին: Շատ բաներ տպավորեցին մեկընդմիջտ, ի թիվս այլոց՝ որ ամենադաժան *բեսպրեձելսչիկները մալուլետկեքն* էին՝ Գուլագում ծնված և/կամ մեծացած:

Այդ օրվանից բազում տեքստեր եմ գրել, և՛ «Բռնության մշակույթը Հայաստանում» (2021)⁷, և՛ Armenia 3.0⁸ անգլերեն (2020) գրքերում, և խոսել եմ, և՛ էլի կգրեմ ու կհետազոտեմ – Գուլագը որպես կոնկրետ սոցիոլոգիական հիմք՝ այդ բարքերի, որ հաստատվել էին Խորհրդային

7 Տեր-Գաբրիելյան, Գ. (գլխ. խմբագիր), Հովակիմյան, Գ., Մմբաթյան, Հ., Պետրոսյան, Հ., Ավագյան, Յ., Խուրշուդյան, Շ. (2021). *Բռնության մշակույթը Հայաստանում*. Երևան, Հայաստան- <https://epfarmeria.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>

8 Տեր-Գաբրիելյան, Գ. (2020) *Արմենիա 3.0. հասկանալ 20-րդ դարի Հայաստանը* [Ter-Gabrielyan, G. Armenia 3.0. Understanding 20th Century Armenia. Yerevan, Armenia]- <https://epfarmeria.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia> (անգլերեն):

Since then, I have written a great deal on this subject, including in the books *Culture of Violence in Armenia* (2021)⁹ and *Armenia 3:0* (2020, written in English).¹⁰ I have talked about it, and I will continue to explore the Gulag as a specific sociological basis for the mores that were shaped in Soviet Armenia and passed on to us. My colleagues and I are carefully studying how these practices, along with Sovietization, encompassed one-sixth of the world. From the atrocities of WWI that gave rise to Bolshevism, the Cheka (All-Russian Extraordinary Commission, known as the early Soviet secret police agency), Stalinism, and WWII, to their mild versions that followed the Gulag, e.g., *tsekhavism* (a term derived from the Russian word “tsekh,” meaning “a factory department,” and associated with black market activities) which straight after independence evolved into a criminal oligarchy, a wild and oppressive form of capitalism. In my review of *The Empire Must Die* by Zygar (2018), I pointed out that the culture of reckless disregard for human values has its roots in Russian serfdom. It distorted and undermined basic rules of coexistence and has continued to shape the mores of post-Soviet Armenia to the present day, permeating schools and other closed environments, including prisons, the army and the “natural order” of families, breeding domestic violence. It is deeply embedded in our everyday life.

The unhealthy vulgarization of the immediate lifeworld around me by the criminal culture (for all its phony and farcical nature) was inherited from the Gulag, i.e., it had a specific reason and required a specific solution: the need for us to come out from the Gulag's shadows. The relations at school were the parody of power relations inherited from the Gulag culture: the urge to “effeminize” or emasculate a man or a boy and make him a *zapadlo*¹¹, *garlakh*¹², *gyot* (offensive Armenian term for “gay person”), untouchable, that is more than an outcast, *haram* or filthy (whereas harem was like a dream), *pitukh* (literally translates as “rooster,” another slang term for “gay person” – oddly enough, the exact opposite of *geghi khoroz*, the Armenian expression for “cocky person,” which exemplifies the twisted nature of the world or *massaraksh*,¹³ as well as the carnivalization of

9 Ter-Gabrielyan, G., Hovakimyan, G., Smbatyan, H., Petrosyan, D., Avagyan, Y., & Khurshudyan, Sh. (2021). *Culture of Violence in Armenia*. Yerevan, Armenia [in Armenian with English summaries]. <https://epfarmeria.am/hy/document/Culture-of-Violence-in-Armenia>

10 Ter-Gabrielyan, G. (2020). *Armenia 3.0: Understanding 20th Century Armenia*. Yerevan, Armenia. <https://epfarmeria.am/document/Armenia-3-0-Understanding-20th-Century-Armenia>

11 Russian slang word for “dishonorable,” beyond the “tough guy’s” dignity. For instance, cleaning toilets in the army.

12 It has the same meaning as *zapadlo* in the Armenian slang – a place/situation the “tough guy” should not find himself in, or a male person who has become “untouchable” or “filthy” as he was engaged in “dishonorable” things. The author has to explain these concepts the way he can, as they cannot be found in Merriam-Webster’s Collegiate Dictionary.

13 A common expression in *The Inhabited Island* by Arkady and Boris Strugatsky, which literally meant “the world inside out.”

Հայաստանում, և որ ժառանգեցինք: Քայլ առ քայլ դիտարկում եմ, գործընկերների հետ, ինչպես էր խորհրդայնացմանը զուգահեռ մշակույթն այդ պարուրում աշխարհի մեկ վեցերորդ մասը: Առաջին համաշխարհայինի դաժանությունից՝ բռնկվում, չեկա, ստալինիզմ, երկրորդ համաշխարհային, հետո էլ հետգուլագային «լայթ» տարբերակները՝ ցեխավիզմը, օրինակ, որ հանգեցրեց անկախությունից ի վեր վայրի կեղեքիչ կապիտալիզմի՝ քրեաօլիգարխիայի հաստատմանը: Մարդու արժեքը բանի տեղ չդնելու այդ մշակույթի արմատը Զիգարի «Կայսրությունը պիտի մահանա» գրքի գրախոսությունում (2018) փնտրել եմ Ռուսաստանի ճորտատիրական կարգերում: Ձևախեղում էր այդ մշակույթը եղած համակեցությունը՝ դեգեներացում, և պայմանավորեց հետխորհրդային Հայաստանի բարքերը՝ մինչ այսօր, ընդհուպ մինչև դպրոցը, փակ «միասեռ» միջավայրերը՝ բանտը, բանակը, և ընտանեկան բռնության «նորմալությունը»: Այն մնում է տարրալուծված մեր ամենօրյա կյանքում:

Գուլագից ժառանգած (թեկուզ՝ փսևոդ-, թեկուզ պարողիական) գողական այդ մշակույթի կողմից իմ շրջակա անմիջական կյանքաշխարհի հիվանդ գոեհկացումը կոնկրետ պատճառ ուներ և կոնկրետ լուծում – Գուլագի այդ ստվերից դուրս գալու կարիք: Տղային, տղամարդուն «իգացնելը»՝ կնիկացնելը, *զապադլո* դարձնելու, գառլախացնելու, գյոթըցնելու, պարիայից էլ անդին՝ անդիպչելի դարձնելու իմաստով, հարամ (իսկ հարեմը՝ «երազանք»), անմաքուր, պիտուխ (տարօրինակաբար՝ գեղի խորոզի ճիշտ հակառակը, այդ շրջադարձները ցույց են տալիս աշխարհի շուտովաժույթությունը՝ մասսառակշը (Մտրուգացկիներ)՝ *կառնավալիզացիան*՝ բռնության, բեպրեձելի աշխարհում),- իշխային հարաբերության քվինտեսենցիան էր՝ մեր դպրոցում պարողիական կերպով *մշակութահիմնված*՝ առաջին դասարանի առաջին օրից: Եվ այդպես մեր կյանքը զարգացավ, իրար քրֆելով, ք...-ով, հայիոյելով ու քցելով, և հասանք էսօր: Էսօրվա հետսովետը մեր դասարանն է: Դպրոցում չէի հասկանում՝ ինչու են տղաներն էդպիսին, իսկ աղջիկներն ու ուսուցչուհիները՝ անտարբեր ու իբր՝ խուլուհամր, տղաների այդ մսաղացը չտեսնող: Գուլագը, հետո պատերազմը և այլն բացատրեցին, մեծահասակների աշխարհի երեսպաշտության հիմքը բացահայտեցին. «Ձեռք մի՛ տուր այդ թեմաները, քր իս են, զապադլո՛, գառլա՛խ»,- ասում էին ինձ: «Դրանք չկա՛ն,- ասում էին ինձ,- գոյություն չունե՛ն, չի՛ եղել: Ո՛չ ցեղասպանություն, ո՛չ Գուլագ, չի եղել ու չի լինում, աչքի՛ դ է երևում: Իսկ մենք այդ ընթացքում՝ քեզ բռնաբարենք»: Գուլագի և քաղքենիական լիբերալիզմի այդ հոյակապ ունիկալ համաձուլվածքը, որը և թույլ է տալիս բեպրեձելից լիաօնոյիզմին՝ ծաղկել: Չէ՛: Եկեք խորանանք, տեսնենք՝ ինչե՛ր դուրս կգան: Я ассенизатор и водовоз (Մայակովսկի):

violence and lawlessness). That's how things turned out; we kept cursing, cussing, screwing, and dragging each other down until we ended up where we are now. Today's post-Soviet space is entirely the result of our Soviet school. At school, I didn't understand why boys behaved this way as opposed to girls who, along with teachers, were indifferent to such behavior, as if turning a deaf ear or a blind eye to the meat grinder boys were going through. The Gulag and wars, among other things, explained it to me, exposing the hypocrisy of the adult world. "Don't touch these subjects, they are filthy, *zapadlo* and *garlakh*," I am being told today. "They don't exist," they tell me, "They never happened. There is no such thing as genocide or Gulag, there never was, nor ever will be, they exist only in your imagination. In the meantime, we will rape you." This is a splendidly unique combination of the Gulag and philistine liberalism, which nurtures this lawless *blatnoy* culture. No way! Let's delve deeper into these subjects and find out more. *I, a latrine cleaner and water carrier* (Mayakovsky).

The problem of "top and bottom" in power relations can be perfectly illustrated by the "Zangezur Corridor."¹⁴ Why do we think in two dimensions, either ours or theirs? Let's use "design thinking." One creative possibility is that it takes the form of an overpass over Armenian territory. But in this case, somebody will say, the Azerbaijanis gain the upper hand over the Armenians; they might even throw apple cores or other objects at us from above. Perhaps it would be better to dig a passage and let them go in and out of their tunnel. In this case, "we" will outplay "them," staying "above." On the other hand, they can dig a hole up from there and thus damage the surface of our Syunik. Or they can plant a bomb deep underground and blow us up. Both war and *blatnoy* culture have the same mindset; weapons are a phallus designed to destroy human nature, or at least put it down.

Perhaps it would be better if the North-South Road corridor and the "Zangezur Corridor" intersected, creating a crossroads. The latter is imbued with a specific meaning; a cross is neither a yonic symbol though it has a center, nor a phallic symbol though it has edges. Although the cross served as an instrument of capital punishment (but also a symbol of resurrection), it is at least one of the most unique symbols outside the binary system of sex and violence. But they will certainly be squeamish about the cross too.

The reign of the Gulag political economy and culture in Soviet "peaceful life" imported *blatnoy* culture from the Gulag and turned the value and dignity of human life into dust – camp dust. Now it wants to turn human life into radioactive

Վերև-ներքևի խնդիրն իշխային հարաբերություններում փայլուն է արտահայտվում «Ջանգեզուրի միջանցքի» հարցում: Ինչու՞ ենք միշտ երկչափ մտածում: Տարբերակներից մեկն է՝ որ այն անցնի Հայաստանի տարածքի «վերևով»՝ որպես էստակադ: Բայց այդ դեպքում ստացվում է, որ արդիւնաբերականները վեղի են վեկալում հայերի վրա և վերևից կարող են ներքև շարտել կրծած խնձոր և այլ բաներ: Իսկ գուցե, այդ դեպքում, թունե՞լ լինի փորված, *թունելով գնան-թունելով գա՞ն*: Բայց այդ դեպքում էլ նախ՝ իրենք են «տակ» մնում, երկրորդը՝ այնտեղից էլ կարող են ծակ փորել և մեր Սյունիքի մակերևույթը վնասել, կամ՝ ռումբ դնել խորքերում և մեզ գմփցնել: Պատերազմն ու բլատնոյիզմը նույն հոգեբանությունն են, զենքը՝ ֆալլոս, մարդուբնությունն ոչնչացնելու համար, կամ եթե ոչ՝ ապա գոնե *կզցնելու*:

Չէ, երևի՝ պիտի խաչ անեն, Հյուսիս-Հարավն ու «Ջանգեզուրի միջանցքն» իրար գան, խաչմերուկ կազմեն: Եվ դա հատուկ խորհուրդ է պարունակում, քանի որ խաչը, թեև կենտրոն ունի, յոնիկ սիմվոլ չէ և, չնայած ծայրեր ունի, *ֆալլիկ* էլ չէ: Բացառիկ սիմվոլներից է, որ, չնայած մահապատժի գործիք է եղել, սակայն գոնե սեքս-բռնություն *երկրությունից* դուրս է: Խաչից էլ իրենք կխորշեն...

Գուլագի քաղտնտեսության և մշակույթի թագավորելը «խաղաղ» սովետական կյանքում բլատնոյ մշակույթը Գուլագից վերցրել-բերել ու մարդու գինը՝ կյանքի թե արժանապատվության, դարձրել էր փոշի՝ ճամբարափոշի: *Лагерная пыль*: Եվ հիմա ուզում է դարձնել *ядерная пыль*⁹: Դու գուցե երբեմն նույնիսկ օրենքով գող ես եղել, բայց մեծ մասամբ՝ չէ, տուժած. պարիա ես եղել կամ նույնիսկ չես եղել և խառոշի, լոխ, մուժիկ, հարիֆ կամ «ճշտով տղա» (չ) ես եղել և գուցե նույնիսկ «ընկած», «կզցված» ես եղել, բայց գալիս ես տուն՝ «խաղաղ» կյանքի, և ա՛յդ օրենքը կամ դրա պարողիան ես հիմնադրում: Գլուխ գովելով, իբր այնտեղ՝ ծակում էլ էիր ճշտովը: Խնդիրն այն է, որ, իհարկե, զեկերի խոշոր մասը չի էլ վերադարձել և, մի խոսքով, վիրտուխայների շանսը՝ առողջ լինելու և բազմանալու, բնականաբար շատ ավելի մեծ էր: Եվ ուրեմն այսօրվա մեր հասարակությունները կազմված են հիմնականում վիրտուխայների, պրիդուռլկների կամ «չեզոքների» սերունդներից – իսկ «չեզոքները» պիտի հարմարվեին վիրտուխայներին: Եվ գողական բեսպրեձելի այդ մշակույթը, բնականաբար, ոչ էլ այնքան նույնիսկ նստած-հեղածներն են բերել և արմատավորել, որքան վիրտուխայներն ու իրենց սերունդները: Որոնք՝ *չեկիստակազեբեական վիրտուխայությունը*, հենց և հիմնադրել, խնամել, թիմարել ու ծաղկեցրել էին այդ մշակույթը. որ մարդն արժեք չունի:

14 The would-be Zangezur Corridor would connect the mainland of Azerbaijan with its exclave of Nakhchivan through Armenian territory.

9 2014 թ. Դեկտեմբերի Գիսելյովը հանրային ռուսական հեռուստատեսությամբ առաջին անգամ հանրայնորեն արտասանեց այդ բառակապակցությունը՝ *ядерный пепел*: *Ядерная пыль* նույն բանն է, ավելի է սազում:

dust.¹⁵ Some of you might have been a “thief in law¹⁶” in the Gulag, but most of you were victims. Maybe you were an outcast, or maybe you were not. You happened to be (or not) a *kharoshi* (slang term for “tough guy”), *lokh* (Russian slang word for “person who is easily fooled”), *muzhik* (Russian word for “real man”), *harif* (Armenian slang word for “naive person”), *chshtov tgha* (translates as “true guy,” Armenian slang expression for “tough guy with his own set of principles”), or even someone who was “fallen” and “put down.” Nonetheless, once you came back to a “peaceful life,” you tended to set the Gulag rules or a parody of them at home and in your quarters too. Of course, the thing is that most of the *zeks* did not even survive, so surely the *vertukhai* (Russian slang term for “camp guard”) stood a much better chance of staying healthy and multiplying. Thus, our societies today consist mostly of generations of the *vertukhai*, *pridurki* (the Russian word “pridurok” translates as “partly-imbecile” and refers to the *blatnoy* who agreed to cooperate with the state, i.e., become the *vertukhai*) and “neutrals” (if any) – the latter group, in turn, had to adapt to the *vertukhai*. The culture of no-limits *bespredel* was introduced and ingrained not so much by jailbirds as by the *vertukhai* and their descendants. It is the *chekists* (slang word for “political police officer”) and *gebeshniks* (slang word for “KGB man,” the letters “g” and “b” stand for “state security”) of the *vertukhai* clan who founded, nurtured, and cultivated this culture which places no value on human life. Reinforced and sustained by the *zeks* and the *vertukhai* alike, this symbiosis of *blatnoy* and *vertukhai* culture has continued right up to the present day. This contagious culture of the Gulag *bespredel* permeated the lifeworld in our backyards, neighborhoods, and schools. No matter whether it was a parody or not, we were destined to grow up to be its heirs.

If you are confronted by a no-limits beast, protect yourself from it by all means; every action against it is fair, whether you adapt to it or resort to no-limits behavior as well. Do as your common sense tells you. That’s why prisoners of war of advanced armies have permission to confess everything they know and divulge all their secrets; maybe then they will not be tortured unless their torturers turn out to be ruthless lunatics. Sometimes even this advice does not work out (to which I will refer later). That’s why a suicide bomber makes a last-ditch effort by killing innocent people and is prepared to do so, believing that it is the last resort against the no-limits *bespredel* of current civilization.

15 In 2014 Dmitry Kiselyov publicly uttered the phrase “radioactive ash” for the first time on Russian TV. Since then the possibility of a nuclear strike is mentioned daily, with special vigor since February 24, 2022.

16 The highest-ranking criminal position in the Gulag. More about this concept here: Aghasi Tadevosyan, Nikol Margaryan (2023). Explanatory Dictionary of Criminal (“Thief”) Slang: English Summary. Yerevan, Armenia. <https://epfarmeria.am/documents/dictionary-of-armenian-criminal-slang>

Միմյանց ամրապնդելով, իրար պաս տալով՝ զեկավիրտուխայ բլատնոյ մշակույթի սիմբիոզը եկել հասել է մեր օրեր: Գուլագային բեսպրեձելի էդ վարակիչ մշակույթը պայմանավորել էր մեր բակային և թաղային և դպրոցական կյանքաշխարհը, թեկուզև որպես պարոդիա կամ ո՛չ այնքան որպես պարոդիա, - և հետո մեծանալու ու դրա ժառանգներն էինք դառնալու:

Դեմդ բեսպրեձել գազան դուրս եկավ՝ իրենից ամեն կերպ պաշտպանվելը, իր դեմ ամեն քայլ արդարացի է, հարմարվես թե ինքդ էլ բեսպրեձելի դիմես. ինչպես որ քո լավագույն դատողությունը քեզ հուշի: Դրա համար գերիներին ասում են՝ ինչ գիտես՝ ասա՝, գաղտնիք մի՛ պահիր, գուցե այդ դեպքում չխոշտանգեն, թե լրիվ վայրագ գիծ չեն: Երբեմն դա էլ չի օգնում (տե՛ս հետո): Դրա համար ահաբեկիչը երբ որոշում է դիմադրության վերջին քայլին դիմել՝ իր հետ լիքը անմեղ կյանք է տանում և նախապես համաձայն է, որ այդպես է լինելու:

Եվ այսօր դրա վտանգը համաշխարհային ժողովրդավարության գլխին է կախվել. քանի որ այլ ելք չկա՝ պիտի բեսպրեձել լինես համաշխարհային բեսպրեձելի դեմ, նույնիսկ դրա զուտ հնարավորության դեմ, որովհետև ցինիկ աշխարհում օրը 200 կամ 800 մարդ ամիսներով սպանելը բեսպրեձել չէ դեռ, բայց՝ բեսպրեձելի հստակ հնարավորություն, որ ստիպում է երկմտել. «Իսկ արդյոք վախտը չէ՞, որ մենք էլ ի վերջո բեսպրեձելի դիմենք՝ մի որևէ «ասիմետրիկ պատասխանի» ձևով, որ հնարավոր արդեն լրի՛վ բեսպրեձելի դեմն առնենք»: Դա կոչվում է «անվտանգության դիլեմա»:

Ոչ-գեղարվեստական հետազոտություններին թեման դարձավ – Սոլժենիցին: Ո՛չ միայն Հայաստանում քսաներորդ դարը, բռնաճնշումներն ու Գուլագը լավ չեն հետազոտվում: Ովքեր էլ հետազոտում են՝ իմ բարեկամները, երբեմն, թույլ տվեք քննադատեմ, սխալ մեթոդ են օգտագործում: Վեր են հանում անունները, մեղադրանքների ձևակերպումները, նայում, թե քանի, ասենք, մատնագիր՝ *դոնոս* կար գրած և այլն, - բայց մթնոլորտային այդ ճնշումը՝ գուլագային մշակույթի՝ համատարած հասարակական դառնալը, իրենց շատ կարևոր հավաքչարարական այդ գործն անելիս հաճախ զանց են առնում:

Մինչդեռ կեղտոն ազդում է ամեն կողմից և ամենքի վրա: Սոլժենիցին-Շալամով վեճն է. արդյոք Գուլագում մի լավ բան կար թե ոչ: Մի քիչ չհասկացված վեճ էր. Սոլժենիցինն ասում էր, որ չնայած դրան՝ մարդը պիտի փորձի և աշխատի մնալ մարդ, չէր ասում, թե լավ բան կա: Իսկ Շալամովն ասում էր՝ ո՛չ մի լավ բան չկա, և մարդն այդտեղ մարդ չի մնում: Ես հակված եմ Շալամովի կարծիքին, նայելով շուրջս: Նույն կերպ էլ Միլգրամից ժառանգած սոցիալական հետազոտություններն եմ քննադատում, երբ մարդուն ստուգում են՝ դաժան է թե ոչ, հիմար է թե ոչ, հարմարվող է թե ոչ, և պարզվում է, որ՝ այո՛, անսահման դաժան է, հիմար

Today this threat looms over global democracy. Since there seems no way out, many people think we are forced to turn to *bespredel* in order to fight against the aggression of the global *bespredel*, against the mere possibility of its victory; the fact that for months on end 200 or 800 people a day are killed in war in this cynical world does not imply that the global *bespredel* has already won, but a distinct possibility of that victory makes you wonder whether it's not time for you to finally turn to *bespredel* in the form of some “asymmetric response,” to crush that possibility of the global victory of *bespredel* for good, as long as it has not caught you yet. This is called the “security dilemma.”

Solzhenitsyn became the subject of my nonfiction research. The 20th century, the Gulag and mass repression are not properly examined in Armenia. Moreover, those who study these subjects, including my friends, sometimes adopt the wrong methods, I am bound to say. They identify the victims of repression and study the indictments or find out how many *donoses* (Russian word for “unsubscribed allegation”¹⁷) were written, etc. Nevertheless, despite carrying out the arduous task of gathering data, they often fail to examine atmospheric pressure, namely the fact that the Gulag culture has become a widespread social phenomenon in today's post-Soviet societies and is spreading out.

Meanwhile, viciousness affects every aspect of our lives. It all comes down to the dispute between Solzhenitsyn and Shalamov as to whether it is any good in the Gulag. To some extent, this dispute arose out of a misunderstanding. Solzhenitsyn argued that notwithstanding the Gulag, one should try to stay human; he didn't really say there was anything good in it. Shalamov, on the other hand, claimed there was nothing good in it, and one does not stay human there, full stop. When I look around, I lean toward Shalamov's opinion. Similarly, I am critical of social studies based on the Milgram-type experiments that find out whether people are cruel, stupid and adaptable. It turns out that people are indeed infinitely cruel, stupid, adaptable, and self-centered, if manipulated. I think the ethical approach implies that one should conduct no experiment in which one is forced to make a choice between “good” and “bad.” One should not be artificially forced to make such a choice. The “natural” lifeworld has already set enough traps. Those in charge of these experiments (those who have power in that situation) artificially make us face a dilemma, by luring us into thinking that the “bad” option is also possible or even acceptable, which is sufficient to legitimize the “bad” choice. In this way, it becomes contagious. When I take part in a TV debate with an intelligent but corrupt person, I set the bar high by offering to think seriously about a problem, which transforms my opponent into a more interesting and complex character, depriving him of an opportunity to use commonplace phrases. Demand

և հարմարվող և ոչ մեկի մասին չմտածող: Էստեղ էթիկական մոտեցումը պիտի լինի՝ չանել լ սոցիոլոգիական էքսպերիմենտներ, որոնցում մարդուն ստիպում են «ազատ» ընտրություն կատարել լավ-ի և վատ-ի միջև: Մարդուն չպե՛տք է դնել այդպիսի ընտրության առջև՝ արհեստականորեն: «Բնական» կյանքաշխարհն արդեն լիքը այդպիսի ծուղակներ տրամադրում է, հերիք է: Երբ արհեստականորեն այդպիսի երկրնորանք է նախագծվում՝ «վատ»-ի տարբերակը ճառագում է կազմակերպիչ-մարդկանց (իշխի) կողմից՝ որպես հնարավոր և նույնիսկ՝ թույլատրված, իսկ դա արդեն հերիք է, որ այն լեգիտիմանա: Եվ սկսում է վարակել: Խելոք, բայց ծախված և էթոպիստ մարդու հետ եթե հեռուստաբանավեճի եմ՝ նրան ա՛յլ մակարդակի սանդղակ եմ առաջարկում. լուրջ մտածելու. կերպարանափոխվում է, դառնում է հետաքրքիր և անմիանշանակ: Պահանջի՛ր մարդուց լավը՝ դա՛ կստանաս, հիմնադրի՛ր ստորի մշակույթը՝ դա՛ : Եվ սուտ է, որ ասում են՝ «տղերքը կռվում են՝ կյանքի դպրոց է», կամ «բանակը կյանքի դպրոց է» – ինիցիացիայի այդ իբր-գովերգված սովետական ու հետսովետական տարբերակները հաշմանդամ դառնալու կամ մահանալու՝ դպրոց են: Վերքերը չեն սպիանում հոգումդ և արնակալում են մինչև կյանքիդ վերջ, իսկ որպեսզի չարնակալեն՝ պիտի բթանաս, և ուրեմն եթե կյանքը բուրձ լինելն է, եթե բուրձ, անզգամ լինելն օգնում է ապրել՝ լավ, բայց այդ դեպքում ինչու՞ է մեզ տրվել զգալու, մտածելու, հասկանալու, ինքներս մեզնից անսահմանորեն մեծ լինելու, այլ կենդանիներից այդչափ տարբերվելու ունակությունը:

Ինչպես որ 2000-ականների մեջտեղից շփման գծում կրակոցներից – թշնամու էլ, «ինքնա-» էլ – գոհերի թիվն էր կամաց-կամաց ավելանում և «սովորական» լուր դառնում՝ այդպես էլ նույն ժամանակից Ռուսաստանն էր վերադառնում Գուլագին: **Պուտինը, դու մի ասա, իմ դասարանից էր:** Նա լի է քաղքենիական էրուդիցիայով և «քաղքի տղու» ոճերով, այդ ոճերը հիմնականում սովետական և գողական ֆոլկլորից են: Մի կողմից նույնիսկ ա՛յդ դեպքում դա ցույց է տալիս, որ նա բազմակողմանի ուղեղ ունի, մյուս կողմից՝ առանձին մարդու անհատական զարգացածությունը, ավաղ, անկարևոր է դառնում նյուրնբերգյան Հաագաների արժանի տառականների վերածվելու դեպքում: Իր խոսքը շա՛տ վաղուց ասաց՝ դեռ երբ նոր էր եկել գահին, չէչենական երկրորդ պատերազմի կոնտեքստում. мочить в сортире: Միջուկային «գերտերության», տարածքով աշխարհի ամենամեծ տերության գերագույն գլխավոր իշխն ամենաբարձր ամբիոնից այդ լեզուն էր լեգիտիմացնում: Ո՛չ միայն սա այդ գերտերության բարձրագույն իշխ – «շշի վզիկի» ինքնության՝ գուլագա-գողական, զեկավիրտուխայական, չեկիստա-կագեբեական պատմամշակույթի հետ նույնականացում էր, այլև արդե՛ն հենց իմ ասած՝ ստորացման մշակույթի (դպրոցից ինձ ներծծած) քվինտեսենցիոն ձևակերպում: Мочить, իհարկե՛ թացացնել, գողական լեզվով՝ դանակահարել՝

17 Донос (donos) (Russian) – the English equivalents may “squeal” or “song”. Доносчик (donoschik) (Russian) – snitch, informant, or squealer.

good deeds from people, and you will get them. Create a culture of meanness, and you will reap its fruits. The common expressions “let the boys fight, it’s the school of life” or “the army is the school of life” are simply not true; these supposedly glorified Soviet and post-Soviet versions of initiation rites epitomize the institutions where you are taught to be maimed or die. Soul wounds do not heal and instead, bleed for the rest of your life. To heal them, you need to be insensitive. If life is all about being insensitive, if being insensitive and callous helps you to survive, then it’s fine. On the other hand, why on earth are we endowed with the ability to feel, think and understand, to be part of something bigger than ourselves, to be so different from other earthly creatures?

Since the mid-2000s the number of soldiers killed in shooting incidents – both by enemy bullets and by their “own” – along the Line of Contact (Nagorno-Karabakh) had been gradually increasing, thus becoming nothing out of the ordinary anymore. In parallel, modern Russia began to relapse into the old Gulag ways. **It turns out that Putin was my classmate.** He is full of philistine erudition and has the demeanor of a streetwise guy; his manners are mostly copied from Soviet criminal folklore. On one hand, it implies that he has a versatile mind, but on the other hand, personal intelligence no longer matters if one morphs into a cockroach that should be on trial in Nuremberg or in The Hague. He said his first piece shortly after he had ascended the throne, by referring to the Second Chechen War: мочить в сортире (literally translates as “to wet in the outhouse”). The supreme ruler of a nuclear “superpower,” the country with the largest territory in the world, uses his bully pulpit to legitimize this language. This was not only a sign that this supreme power is based on a bottleneck system, inherent in the historical culture of the Gulag and criminality, the *zeks* and the *vertukhai*, the Cheka and the KGB, but also a quintessential expression of the culture in which the main value is humiliating others (the same culture that I have experienced since I was a schoolboy). In the criminal language “мочить” means to stab someone, to draw blood. But why in the outhouse? Because the supposedly “chivalrous” myths of *blatnoy* culture persist that doing it in the outhouse is *zapadlo* (beneath one’s dignity); people are most vulnerable there, so you need to wait until they have done their business, flushed the toilet (ha-ha), washed their hands (ha-ha) and come out of the outhouse. That’s when you wet them up. Who can be whacked in the outhouse, so it’s not considered *zapadlo*? Only the most humiliated person or your worst enemy, the one you can destroy in a latrine without being condemned or disapproved of by the criminals’ *kurultay* (or “mafia summit”). You can do so if you feel “morally right” to resort to *bespredel*. Obviously, you resort to *bespredel* in response to your enemy’s behavior, which you perceive to be no-limits. Using this metaphor in that historic speech, Putin was effectively conveying the message that he declares a no-limits war of *bespredel* against anything that would challenge his rule, and that the enemy was so unjust and vile that whatever action you took

արյունը թողնել, кровь пустить: Բայց ինչու՞ արտաքնոցում: Որովհետև սովորաբար արտաքնոցում դա անելը զապաղյո է համարվում հենց բլատնոյների՝ իբր-«ասպետական», իբր «ճշտով» մշակույթի միջոցով: մարդն ամենաանպաշտպանն է այնտեղ, և ուրեմն սպասիր՝ իր գործն ավարտի, ջուրը քաշի (խա-խա), ձեռքերը լվանա (խա, խա) դուրս գա՝ նո՛ր արյունը բացիր: Իսկ ո՞վ իրավունք ունի, ու՞մ դեպքում զապաղյո չեն համարի՝ զուգարանու՛մ գլխին հաշվեհարդար տեսնելը: Ամենա ստորինի, ամենա թշնամու. նրա, ում նույնիսկ եթե զուգարանում ոչնչացնես՝ գողական կուրուլտայը քեզ չի մեղադրի և դատապարտի: Եվ կամ՝ եթե բեսպրեձել ես հայտարարել: Բեսպրեձել, բնական է, հայտարարում ես ի պատասխան թշնամու այն վարքի, որը բեսպրեձել ես ընկալում: Իր այդ առաջին պատմական խոսքով Պուտինն ասաց, որ բեսպրեձել է հայտարարում այն ամենին, ինչն իր իշխի դեմ է դուրս գալու, և որ այդ ամենն այնչափ անիրավ է և ստոր, որ նրանց հետ ինչպես էլ վարվես, սխալ չի լինի: Եթե տարիների ընթացքում ասված նրա «պատմական» խոսքերը վերլուծենք՝ խորացնում էր ա՛յդ մշակույթը, ա՛յդ իշխառճը, ա՛յդ քաղաքական համակարգը՝ մեր դպրոցի. ցենզուրա-երեսպաշտության և բեսպրեձելի միասնության: Ահա ինչպես է դա պատկերում Գասան Գուսեյնովը՝ տարիներ շարունակ այդ ընթացքն ուսումնասիրողը.

«Эстетика отвратительного закрепляется, когда общество приноравливается к сосуществованию с тараканом в щели и – одновременно! – к отказу при всех произносить слово «мочеиспускание»: это же так некультурно! А уж начнёшь обсуждать историческую мизогинию национального гения, огребёшь ещё и за русофобию. Ишь, чего вздумали! У нас же эстетика, всё должно быть культурно, а тут – «мочеиспускание» какое-то»¹⁰. Սա ասվում է էլի վաղ ժամանակների՝ 2000-ականների սկզբի պուտինյան ևս մեկ «մարգարտի» առիթով. «обрезание всего лишнего, чтобы больше не выросло»: Ոչ միայն, ուրեմն, հանրային զուգարանում մորթել և այդպիսով՝ «իզացնել», «աղջկացնել», կզցնել, գառլախացնել էր խոստանում բեսպրեձելչիկն իր թշնամիներին, այլև մշակութային երկու հսկա խմբերի թլփատման ավանդույթն էր սրբապղծում:

Արդեն ամենը պարզ էր. Հայաստանի իշխի գողականությունն ու գոհեկությունը թու՛յլ նմանակումն էր, կամ ինչպես սովետական անեկդոտն էր ասում՝ «փոքր ախպերն» էր ռուսաստանյան բլատնոյ-չեկիստական միության հսկա փղի մշակույթի: Ասես «մեծ ախպոր» «օրինանքն» առնելով՝ Ռոբերտ Քոչարյանն ու իր թիկնապահները ծեծելով մահվան հասցրին Պողոս Պողոսյանին «Պապլավով» պատմական երևանյան հայտնի սրճարանի զուգարանում, այդպիսով զառլախացնելով

10 Գուսեյնով, Գ. (2022). «Գարշելիի արտասովոր հմայքը» [Гусейнов, Г. (2022). “Странное обаяние отвратительного”]-<https://tinyurl.com/589yet99> (ռուսերեն):

against them would not be wrong. Analyzing his “historic” phrases uttered over the years, one realizes that he reinforced the very culture, leadership style and political system of our school class’s “school of thought.” an amalgam of censorship, hypocrisy, and no-limits *bespredel*. Gasan Gusejnov who has been studying this evolution for years, describes it in the following way:

The aesthetics of the disgusting persist when people accustom themselves to coexisting with a cockroach in a crevice and at the same time refuse to utter the word “urination” in public; it sounds so uncultured! Once you discuss the historical misogyny rooted in national genius you will be castigated for Russophobia. Oh, come on! What are you talking about? We have our own aesthetics. Let’s talk in a cultured way. “Urination” is off-limits.¹⁸

This passage refers to another Putin “gem” uttered in the early 2000s:

“Circumcising in such a way that nothing will ever grow back.” Thus, not only did this *bespredelschik* vow to slaughter his enemies in a public toilet, thereby “effeminizing” and emasculating them, putting them down and making them *garlakh*, he also desecrated the practice of circumcision prevalent among two giant cultural groups.

Everything was as clear as day. The vulgarity and criminality peculiar to those who held power in Armenia were a pale imitation, or as the Soviet joke goes, exemplified the “little brother” of Russia’s *chekist* and *blatnoy* “elephant.” As if receiving the “blessing” of the “big brother,” Robert Kocharyan’s bodyguards beat Poghos Poghosyan to death in the toilet of “Poplavlok,” a well-known historic café in Yerevan. The café became a *garlakh* place; those who knew about the incident found it *zapadlo* to visit the place. Although killing Poghos Poghosyan in the toilet was considered *zapadlo*, the message the populace received was clear – it’s not true that the bitterest enemy cannot be killed in the toilet, the truth is everyone we kill in the toilet (it might be you) automatically becomes a bitter enemy. This message fully characterizes the hypocritical nature of *blatnoy* culture and the essence of *bespredel*: you turn the rules upside down whenever it is convenient for you, therefore, while dealing with you, there are no rules.

Tarantino also mocked bathroom killing in *Pulp Fiction* by murdering this “cute” and incompetent hitman played by Travolta, when he emerged from a most ordinary apartment toilet. Tarantino thus joins the ranks of creators like Fellini who mock the world’s depravity, this fusion of sex, toilet, and violence. The scene with the wristwatch which had been hidden in the ass is also a brilliant parody of the glorification of war.

18 Gusejnov, G. (2022). “The Strange Allure of the Disgusting” [in Russian]. Rfi.fr. <https://tinyurl.com/589yet99>

սրճարանը, որն այդ օրից այցելելը տեղյակները համարեցին զապաղլո: Պողոս Պողոսյանին զուգարանում սպանելը զապաղլո էր, սակայն հաղորդագրությունը հստակ էր. ո՛չ թե ամենաստոր թշնամուն չի կարելի սպանել զուգարանում, այլ մեր կողմից զուգարանում ամեն սպանված (իսկ դա կարող էս լինել դու՛) ինքնըստինքյան դառնում է ստոր թշնամի:

Տարանտինոն զուգարանում սպանելն էլ է ծաղրում, «Դեղին գրչակություն» (Pulp fiction) ֆիլմում «հաճելի» և անտեղյակ բանդիտ Տրավոլտային հանկարծ սպանելով «ամենաանմեղ»՝ բնակարանային զուգարանում: Այդպիսով Տարանտինոն ընդգրկվում է ֆելլինիական այդ շարքը՝ ստեղծագործողների, որոնք ծաղրում են աշխարհի դուրսընկածությունը, սեքսի, զուգարանության և բռնության այդ համաձուլվածքը. հետույքում պահվող ժամացույցի դրվագը պատերազմի գովերգման փայլուն ծաղր է նույնպես:

Այսօր էլ ռաբիզա-քյառթու ծաղրածու Շնուռն է ցույց տալիս, որ ռուսաստանյան ցենզուրայի հաղթարշավի պայմաններում «վոյնա» բառը քաղաքականորեն-հանրայնորեն ասելն ավելի արգելված է (կբոնեն, կնստես), քան «խուլնյա»-ն: Դա՛ է Գասանն անվանում «կլոակային լեզու»՝ զուգարանային, արտաքնոցային կամ՝ «տառակականային». երբ բռնությունը, գոեհկությունն ու երեսպաշտությունը միավորված են հանդես գալիս. իրական բառերն արգելվում են, իսկ գոեհիկ խամսավոյականը՝ այլևս ոչ: Դրանով ավարտվեց այն, ինչ դեռահաս ինձ այդքա՛ն դուր էր գալիս Սովետի Ռուսաստանում. ծնողների և զավակների՝ մեր համեմատ նույն հարթության վրա լինելը, աղջիկների՝ նույնպես քֆուր տալը, քֆուրի՝ ավելի հանրային, անթաքուն լինելը, քան մեզանում էր:

Կարելի է պուտինյան այդ լեզվի տարեցտարի ծաղկման վերլուծությամբ դիտարկել՝ ինչպե՛ս էր գուլագայնությունը «մեյնսթրիմանում» Ռուսաստանի կյանքում և շողքը գցում շուրջն ու ամենուր: Կարելի էր, իհարկե, նույնը դիտարկել՝ հետևելով շշերով կամ շվաբոններով ք...-լու՝ բանտա-ճամբարային իրենց համակարգում ահագնացող դեպքերի քանակի՝ խոշտանգումների պատմությանը: Իսկ շողքը... Վերն արդեն նշեցի, որ այստեղ կա մեթոդաբանական մի խնդիր. դու ուզում ես լավը լինես, մաքուրը, ճիշտը, դեմոկրատը, բայց դիմացդ մարդ չէ՝ բեսպրեձելչիկ է, քեզ ատող, մարդատեղ չդնող անթաքույց վտանգ: Ստիպված՝ դու է՛լ ես սկսում կանոնները խախտել, որ իրեն հաղթահարես: Ահա թե ինչու՛ է այսօր ժողովրդավարության հարացույցն ամենուր ճգնաժամի մեջ:

Բեսպրեձելը «շշի վզիկային» իշխի ահաբեկչական վոյունտարիզմի՝ կամայականության, գազաթնակետն է. կուզես՝ «փոքր մեղքի» համար ուժեղ կպատժես, կսպանես կամ «կգաղախացնես»: Կուզես՝ չէ: Կուզես՝ մեծ «մեղքի» համար «կներես»: Կուզես՝ երկար ժամանակ «ներած» կլինես, մեկ էլ՝ դը՛ իսկ: Կուզես՝ ամենաբարին կդրսևորվես, ամենա՝

Today, even a *rabiz* and *qyartu* clown like the Russian singer Shnur shows us that as censorship triumphs in Russia, it's politically more dangerous to openly use the word "war" (you will be thrown in jail) than the word "khuynya" (Russian slang word for "crap," literally referring to d*ck). This is what Gasan Guseynov calls "cloacal" (toilet or outhouse) or "cockroach" language, a system in which violence, hypocrisy and vulgarity come together; real words are banned, whereas vulgar boorishness (or *khamstvo*) is not. That was how what I loved so much about Russia as a teenager degenerated, namely the absence of so much hypocrisy, the fact that unlike us, parents and children treat each other as equals, that girls curse too and that public cursing is more common among them.

Analyzing how Putin's use of crude language flourishes year by year, one can see how Gulagization has entered the "mainstream" of Russian life and cast a shadow over everything. One can reach the same conclusion by monitoring the frightening rise in the number of torture cases in their prison camp system, where inmates are raped with bottles and mops. As for a shadow... I mentioned earlier that there is a methodological problem. Even though you strive to be a good, genuine, truthful person and a democrat, you have to deal with those who are not human, but rather dangerously no-limits people, who despise you and whose main aim is to crush your dignity. You are thus forced to seriously consider going no-limits, breaking all the rules to defeat them. This is why the democratic paradigm faces a crisis across the globe today.

Bespredel epitomizes the ultimate arbitrariness of the "bottleneck" system and its violent nature. It's up to you whether you punish, kill, or debase anyone who committed a "minor sin." It's up to you to "forgive" one's "great sins." It's up to you to grant a pardon to anyone and then suddenly destroy him or her. It's up to you to pretend to be kindness itself, abide by the rules and then on the spur of the moment choose to whack anyone who falls for that trick. It's up to you to punish the "guilty," or anyone you want, by teaching them a lesson. It's up to you to treat a person with kindness and then suddenly choose between punching him in the face so that his tongue is bitten off and his mouth is filled with blood or stabbing him in the stomach and heart. Being a fascist yourself, you call other people fascists. "Kremlin: Kyiv could end the suffering of its population by meeting Russia's demands." Torture and blackmail. Do whatever I want, and I'll leave you alone; it's your fault I'm torturing you. No-limits *bespredel* has no boundaries and respects nothing; this system imputes wrongdoing on others as if it were devoid of any. If it is unable to provide enough examples of the godlessness of "gayrope," it turns everything into a farce. The cartoon figures Cheburashka and Gena the Crocodile are now declared blasphemous or "gay." The Gulag lawlessness is highly contagious, it debases everything it touches. The culture of humiliation is more gripping than high culture, for it's too conspicuous. No-limits is more dominant and seems invincible. It attacks when

կանոնները հարգողը, մինչև խելքիդ չփչի գլխներին տալ նրանց, ով հավատացել էր: Կուզես «մեղավորին» կպատժես, կուզես՝ ում ուզես, ում պատահեց. որ «մեղավորին» դաս լինի: Կուզես՝ բարի բառեր կասես դիմացինիդ, և հանկարծ տակից՝ հարված դնչին, որ լեզուն կծի, և բերանն արյուն լցվի, կամ՝ դանակով փորին, բզով՝ սրտին: Դու ֆաշիստ ես՝ ֆաշիստ կանվանես դիմացինիդ: «В Кремле заявили, что Украина может остановить страдания мирного населения, если выполнит требования РФ». շանտաժով կտտելը. ուզածս արա՝ ձեռքաշեն, դու՝ ես մեղավոր, որ ես քեզ խոշտանգում եմ: Բեսպրեձելը չունի պրեձել, սրբություն, և «կեղտ է բռնում» դիմացինի վրա, իբր՝ նա՝ չունի: Երբ «Գեյռոպա»-ի «սրբապիղծ» լինելու օրինակները չեն հերիքում՝ գործը հասնում է զավեշտի. այժմ արդեն Չեռուռաշկային և Կոկոդոդիլոս Գենային են սրբապիղծ հայտարարել, իբր՝ «զեյ»: Գուլագի բեսպրեձելը համապարփակ վարակիչ է. ով դրան առնչվում է՝ ստորին, ստորացնող մշակույթը շատ ավելի կպչուն է, քան՝ բարձրաբերձը, քանի որ նայում և տեսնում ես. բեսպրեձելն ունի ամեն առավելություն, դեմը խաղ չկա, երբ ուզի՝ հարձակվի, երբ ուզի՝ կամավոր կզի, երբ ուզի՝ կզցնի, ոնց ուզի՝ էնպես հարձակվի և այլն, - սրբություն չկա հոբբսյան բեսպրեձելում, - իսկ դեմի «խղճուկ» խաղերը, որ ուզում են, իբր, երեսպաշտ լիբերալ կանոններով առաջնորդվել՝ այդպիսի առավելություն չունեն: Կանոնը խախտում են, բայց՝ զգույշ, որ չբռնվեն, շրջահայաց, դանդաղ և ոչ այդքան հաճախ: Смущаящийся ворюшка (Իլֆ և Պետրով):

Դրա համա՛ր եմ ասում. բեսպրեձելի շա՛նս իսկ չի կարելի տալ մարդուն, նույնիսկ որպես սոցիալական էքսպերիմենտ. էն, որ ինքը գազան է և ամենավտանգավոր, քանի որ ուղեղ ունի՝ բեսպրեձելչիկ գազան՝ հայտնի է. դժվարը քաղաքակրթության մաշկը վրայից չքերթելն է:

Բեսպրեձելը, երբ չէիր սպասում, քեզ դարձնում է արժանապատվությունից զուրկ, «վերնները քեզ մարդատեղ չեն դրել՝ ուրեմն մարդատեղ չես» (Հրանտ, վերափոխված. Հրանտի գրողական կրեդոն էր՝ վերականգնել այն Մարդուն, որը զուտ վիճակագրություն է պատերազմողների պլաններում), հանկարծակի հարձակում՝ և դու արդեն Մարդ չես, բոմժ ես, գյոթնոցի բնակիչ, այն էլ՝ համաձայն և չտանջվող (Համբարձումի պատմվածքը վկա¹¹): Տարբերություն չկա՝ դու գյոթնոցում ես թե գյոթնոց դրկողներից՝ պրիդուռը կամ վիրտուխայ, երկու դեպքում էլ «ընգած ես», կոռուպցիան գյոթնոցներում լավագույն միջոցներից է: Կա՛մ ընգած ես իշխի՝ համակարգի կողմից, կա՛մ՝ է՛լ ավելի անարգված՝ «դա՛ բըլ» ընգած ես՝ ընգածի քառակուսին. իշխի կողմից *ընգածների* կողմից ես ընգած: Բայց դա նշանակում է, որ *ընգածների* կողմից ընգած լինելն, իհարկե, այլևս ընգած լինել չէ: Ստացվո՞ւմ է, որ միակ դիմադրությունն

11 Համբարձումյան, Հ. (2018). «Գյոթնոցի Բիձեն»- <https://inknagir.org/?p=8738>

it feels like that, it retreats when it feels like that, and it puts you down if it feels like that. There is no game against it, as the Armenian adage says. There reigns a complete disregard for moral values in this Hobbesian state of lawlessness. Attempts to oppose this system by adhering to hypocritical liberal rules are often unsuccessful. These rules are broken by liberals too, though usually carefully so as not to get caught; this is done not so often, and sometimes punished. *A bashful chiseller* (Ilf and Petrov).

That's why I say that no one should be trapped into no-limits, not even for the sake of a social experiment. It is known that man is a creature endowed with reason which makes it possible for him/her to be the most dangerous creature – a no-limits animal. It is too easy to peel off the layers of civilization from him/her.

No-limits *bespredel* robs you of your dignity when you least expect it: “the higher-ups didn't count you in, therefore you don't count” (this is an excerpt from Hrant Matevosyan's prose, a writer whose credo was to restore the Man who is a mere statistic in the plans of warring parties). A sudden attack and you are no longer human; you turn into a pariah, an inmate of *gyotnots* (literally translates as “faggot prison,” Armenian offensive term for “special department in jail where the “untouchables” are put”) who obeys its rules and adapts to being wretched forever (as Hambardzum Hambardzumyan's short story attests).¹⁹ But in fact, it doesn't much matter whether you are an inmate of *gyotnots* or a person sending others there, a *pridurok* or a *vertukhai*, for in both cases you become “fallen”; co-opting people is the best way to enslave (“faggotize”) them. Either you are humiliated by this system, or you are “doubly” humiliated – humiliated by those who were in turn humiliated by the system. But then are you really humiliated if you are humiliated by those already humiliated? Does this also mean that the last resort resistance is to be a no-limits extremist towards no-limits extremists? Is this how Christs (saints) are born?

Alas, liberal enlightenment is too slow to fight *bespredel*. This may end up like the parable of Mullah Nasreddin where a donkey, almost trained to do without food, sadly dropped dead all of a sudden. Liberal enlightenment will most likely not stop educating people unless the world ceases to exist. Let me put it another way. Liberal enlightenment is likely to succeed in educating a million people, but in the meantime, half of them together with more than three million people who have not been educated, will be destroyed or enslaved by *bespredel*.

Liberal: I spell man with a capital M. *Those who attack him*: You are a hypocrite, oppressing others for the sake of your Man, you have swindled us for centuries and now you preach to us, sitting on what you stole from us. *Liberal*: Let's liberate ourselves step by step. Show me my mistakes and I'll correct them. *They*: It's too

ապստամբ բեսպրեձելչիկ ահաբեկիչ լինելն է: Ստացվում է: Բայց նաև՝ այդպես են ծնվում Քրիստոսները (սրբերը):

Լիբերալ լուսավորչականությունը բեսպրեձելին, ավաղ, չափից դուրս դանդաղ է հաղթում, կարող է ստացվել մոլլա Նասրեդինի առակի պես, երբ էշն արդեն գրեթե սովորել էր սոված ապրել՝ ափսոս սատկեց: Լիբերալ լուսավորչականությունը գրեթե կհասցնի մարդկանց կրթել՝ բայց հանկարծ և աշխարհը մինչ այդ վերանա: Կամ նույնիսկ չվերանա, քանի որ այդ վերանալն է՛լ է էգոիստական. աշխարհը վերանա՝ նշանակում է դու՝ կվերանաս: Ասենք այլ կերպ. լիբերալ լուսավորչականությունը գրեթե կհասցնի միլիոն մարդու կրթել՝ բայց այդ միլիոնի կեսը և չկրթված ևս երեք միլիոնն այդ ընթացքում կոչնչացվեն կամ կգոյորցվեն բեսպրեձելի կողմից: Լիբերալն ասում է՝ Մարդ մեծատառով, իր վրա հարձակվողներն ասում են՝ դու երեսպաշտ ես, ճնշում ես այլ մարդկանց հանուն քո՝ Մարդու, դարերով թալանել ես՝ հիմա էլ իրենցից դիզած գողոնի վրա նստած՝ քարոզում ես, նա ասում է՝ քայլ առ քայլ եկեք ազատագրվենք, սխալներս ցույց տվեք՝ ուղղենք, իրեն ասում են՝ ուշ է արդեն, դու էնքան հարուստ ես, որ երբևէ մեր ծակից մեր դուրս գալը չի ստացվելու, կամ էլ հարստությունդ պարզապես բաժանի՛ր և ռադ եղիր, իսկ մենք, այդ գլխներիս թափվող հարստության հետևից ընկած՝ շարունակենք իրար կոտորել:

Ինչ-որ տեղ ինչ-որ բան սխալ է: Անհատ մարդը դեռ կարող է «փրկվել», բայց... Եթե հավատացյալ չես՝ դեռ լրիվ «չփրկված», կամ՝ «կիսափրկված», կամ նույնիսկ՝ «փրկված», - *դռոնը* գալիս քեզ վերացնում է, և վերջ, կամ բեսպրեձելչիկը՝ գոյորցնում... Ի՞նչ օգուտ փրկված կամ կիսափրկված լինելուց... Հասարակությունն է՛րն են, որ չեն փրկվում... Դե արի ու մխիթարանք – մխիթարանք չեմ ուզում ասել, պասիվ բառ է, երեսպաշտ – դե արի՛ և Գեղեցկություն՝ ն գտիր այս գեղեցիկ աշխարհում, ուր մարդկանց մի տեսակը սկզբունքորեն կեղտ է արմատավորում որպես կյանքի կանոն:

Շալամովը ճիշտ էր, որոշեցի ես վերջապես, հասկանալով, որ Գուլագում էի և եմ ապրում (պատերազմն էլ՝ Գուլագի հեշտ տարբերակ). ո՛չ մի իմաստ և արդարացում չկա Գուլագի փորձում: Պիկասոն ասում էր. «Ես գտնում եմ, ո՛չ թե փնտրում», և գտավ «Գեոնիկա»-ն: Իմաստը, որքան ես եմ հասկանում՝ որ կյանքն ու դաժան, բիրտ, բռնի, կործանարար մահը միաձուլված են, և երկինքը երբ փլվում է գլխիդ՝ կենդանի մնացածները դիտում են, թեկուզև՝ շիվարած, կովի հայացքով. իր գտածն, ուրեմն, այն էր, որ կյանքն անկանգ է և մահվան ամեն տեսակին համահավասար, ո՛չ թե գոյությունը՝ չգոյությունից փոքր: Հալալ է իրեն: Եթե հավատացյալ չես և անդրշիրիմյան կյանքի որևէ շոշափելի ապացույց այնտեղից չես ստանում՝ մահը պարզապես վերացնում է, հնձում, ջնջում, և՛ ավելի վատ. գաղափարացումը մահացնում է ֆիզիկապես դեռ կենդանին: Ինչի՞ համար: Ի՞նչ են ապրում դռոններից ոչնչացված տասնյակ հազարավոր պատանիները – անպատասխան ա՛յդ հարցն է տրոփում իմ սրտում:

19 Hambardzumyan, H. (2018). “The Old Geezer of Gyotnots” [in Armenian] <https://inknagir.org/?p=8738>

late, you are so rich that we'll never get our way. Divide your wealth among us and bug off. As for us, we'll keep cutting each other's throats to get our share of the windfall.

Something has gone seriously wrong. The individual can still be “saved” ... However, what if regardless of the fact that you are not yet “fully saved,” “half-saved,” or even “saved” – a drone hovering above destroys you or a no-limits man enslaves you? Also, what's the good of being individually saved or half-saved? It's societies that cannot be saved... How to find solace – the word “solace” does not belong here, it's a passive and deceptive word – how to find Beauty in this beautiful world, where a group of like-minded people deliberately perpetuate and successfully propagate their indecent way of life?

So, I decided that Shalamov was right, since I realized I was still living in the Gulag (war is a version of the Gulag). The Gulag experience makes no sense and cannot be justified. Picasso used to say, “I don't seek, I find.” And he found his Guernica. As I understand it, this painting shows us that life and cruel, brutal, violent and destructive death fuse together, and as the sky collapses onto your head, the survivors still stand there, albeit gazing at the scene cow-eyed. Thus, what he found was that life, like dying, never stops – not that existence is less than nonexistence. Big kudos to him. For an unbeliever who has no real proof of an afterlife, death simply obliterates, reaps, destroys; and even worse – subjugation stifles all living things. Why? What do tens of thousands of young men feel when being destroyed by drones? This unanswered question torments my soul. Frankly, I cannot find the answer, but I seek it. I claim that Picasso didn't find it either, he merely sought it (for a real finding should be universally acceptable and indisputable). Hrant Matevosyan was also looking for a space that could serve as a countervailing force against the absurdity of this lifeworld, when he created the fictional village of Tsmakut. Unfortunately, his realism contradicts his desire to find a place where people behave like angels. This search is perhaps the only realistic, albeit insufficient, way of following what Kant had proposed. Is this search the only thing that makes sense? Is it all about the small deeds theory? Humanity as a cruel Milgram experiment.

Perhaps the crucial sense of writing is at least occasionally to try not to oversimplify the complex realities and be able to delve into their meaning and essence in pursuit of deeper and further significance. Alas, this may be what one calls pareidolia – a phantom, a deceptive phenomenon when unrelated objects are connected, and a meaning is imposed on them which this pattern does not objectively contain. This is what superstitions, divinations, conspiracy theories, etc., do. It's all about people's incapacity to avoid connecting unrelated things to continue cherishing faint hopes.

So perhaps the (hopeless) role of a writer is to capture life, revealing its inner meanings, even if this mostly results in pareidolia. But who knows? Maybe there

Ճիշտն ասած, ես չեմ գտնում՝ (բայց) փնտրում եմ, Պիկասոն էլ, ուրեմն, չգտավ – բայց փնտրեց (որովհետև գտնելը պիտի բոլորի համար լինի և անհարցականացող), Հրանտն էլ էր փնտրում՝ կյանքի այս համատարած դաժանության մեջ մի հակակշիռ անկյուն – և այդ փնտրումն էր/է, վայ թե, միակ պոզիտիվ, թեև այդքա՛ն անբավարար արարքը՝ ըստ Գանտի թե Մարքսի առաջարկած լուծման: Միակ բանը, ինչ իմաստ ունի անե՞լ: «Փոքր գործերի տեսություն»-ը: Մարդկությունը որպես սոցիալական, միլլոնավոր դաժան էքսպերիմենտ:

Գուցե գրի դերը դա է. կյանքի բարդ դրվագները փորձել, գոնե երբեմն, առանց պարզեցնելու ներկայացնել և հընթացս մեջը խորհրդանիշ և իմաստ փնտրել, խորքային, հավելյալ իմաստ: Եվ այդ դեպքերը հենց այն են, ավաղ, ինչը կոչվում է pareidolia՝ խաբուսիկ, խաբկանք-իմաստավորում, անկապություններն իրար կապել՝ ստացվածին իմաստ վերագրելով: Հենց այն, ինչ սնում է սնոտիապաշտությունը, գուշակությունը, դավադրության տեսությունները և այլն. մարդու անկարողությունը՝ անկապ ինֆորմացիան չհամակարգել, հույսեր չփայփայել:

Եվ գրողի (անհույս) գործը գուցե դա է. ֆիքսելով կյանքը՝ խորքային ներքին իմաստներ առաջարկել, փնտրելով, որոնց մեծ մասն ուրվական՝ պարեիդոլիա է լինելու, իհարկե, բայց ո՞վ գիտի, մեկ էլ գտնվեցին մի քանիսը, որ իրոք իրար են կապում կյանքաշխարհի իմաստները:

Առնվազն Պուշկինի ժամանակներից ռուս մշակույթի խորհրդանշական կլիմաքսն է համարվում պոետի և ցարի երկխոսելը: Ես ռուս կամ ընդհանրապես պոետ չեմ և բուրգաիշխի 22ի-վզիկային այդ հիերարխիկ պատկերացումը չեմ ընդունում. մյուս բոլորը հե՛ջ՝ պոետն ու ցարը՝ մեջ: Թեկուզ իմ դասարանից է՝ հետը չեմ երկխոսելու: Եվ սակայն ուսումնասիրում եմ խորը մշակութաբանի այդ լեզուն, ինչպես վարակիչ տառականի: «Մեզ մոտ բոլոր քայլերը գրանցված են», - հիշեցնում է նա «12 աթոռի» ցիտատը՝ պնդելով, թե ուկրաինական հացահատիկն աղքատ երկրներ չի գնում: Մա, վայ թե, ամենամեղ ցիտատներից է. միաչքանի վասյուլինցին դա ասում է Բենդերին, երբ վերջինս շախմատի տախտակի վրայից գողանում է նրա թագուհուն: Արևմուտքը՝ խարդախ Օստապ Բենդեր, մենք՝ անմեղ, միամիտ, սակայն պայքարի պատրաստ վասյուլինցի, որին փորձում է հարիֆցնել Բենդեր-Արևմուտքը: Մեր Մեծ Մշակութաբանը հոյակապ ունակություն ունի, նույնիսկ իր «անմեղ» ցիտատների դեպքում, առնվազն գոնե ռաբիզացնել դասականը: «Գողը պիտի նստած լինի բանտում», - ասաց մեր էրուդիտը մինչև Խոդորկովսկու դատավարության ավարտը, տարիներ առաջ, ցիտելով անմիանշանակ միլիցու՝ հանճարեղ Վիսոցկու խաղացած կերպարին հայտնի ֆիլմից: Վիսոցկին դա ասում է, ի միջի այլոց, երբ հենց անմեղի՛ն է խարդախությամբ բանտ նստեցնում: Նստեցվողը գրպանահատ է, սակայն

will be a few writers who can really dig deep and connect the profound meanings of this lifeworld.

The theme of a conversation between “the tsar and the poet” has been considered the symbolic climax of Russian culture at least since Pushkin’s time. I am neither Russian, nor a poet, and I don’t approve of this hierarchical notion, another characteristic of the bottleneck system intrinsic to pyramid-shaped regimes. As if there was nothing more important than the relationship between a tsar and a poet. Even if the tsar is my classmate, I will not strike up a conversation with him. And yet, I study the language of this profound Cultural Analyst as I would study a cockroach that transmits a disease. “We have all the moves written down.” He quotes *The Twelve Chairs* by Ilf and Petrov, informing us that Ukraine’s grain is not going to developing countries. This is perhaps one of the most innocent quotes. This is what the one-eyed citizen of Vasyuki said to Bender when the latter stole his rook from the chessboard. The West is as crooked as Ostap Bender, whereas we are as naive and innocent as that citizen of Vasyuki, though ready to fight against the Bender-West who tries to make fools of us. Our Great Cultural Analyst has a remarkable ability to at least trivialize the classics, in this case with an “innocent” quote. “A thief should sit in jail,” said our Polymath many years ago, before Khodorkovsky’s trial was over. He quoted an ambiguous policeman from the famous movie, played by the brilliant Vysotsky. Incidentally, Vystotsky utters this phrase when he unjustly puts an innocent man in jail. The one they put away is a pickpocket, but this time he didn’t steal anything. They arrest him to make him denounce a much bigger “beast” that they believe he knows. Vysotsky plants evidence in his pocket and sends him to jail after “discovering” it during a search. This is exactly what the Russian Gulag “law enforcement” system has been doing for years. The logic behind it is impeccable. Everyone is a criminal, we will put away whoever we want by planting evidence on them, there is no such thing as innocent people. A thief must sit in jail, at least the one I personally chose to put in jail. Let the rest live in fear, it will be their turn soon. This has been the case since the early days of the Inquisition. All people are sinners, for everyone has sinned, it’s up to us to torture them and determine who is under the devil’s spell. After all, we the *bespredelschiki* are above the law, we the *blatnoy* act in the name of an infallible god; violent power is the name of our god. This purely archaic and anti-rational approach to the concept of guilt violates the core values of the legal system – from Roman law through Hobbes and Locke to modern liberalism.

How dare I! “We mustn’t paint police officers all in black and put them down,” the Great Folklorist says to me warningly. Putting others down is obviously **his** favorite pastime, **his** privilege, and it’s up to **him** to decide who and when to put down. The Great Chastushka (rhyming verse) Scholar recently declared that Western nations decided to rely on non-traditional types of energy since

այս անգամ ոչինչ չի գողացել, իրեն բռնել են՝ որ մատնի շատ ավելի խոշոր «գազանի», ում, կարծում են, ճանաչում է: Վիսոցկին խարդախությամբ նրա գրպանն է նետում հանցանշանը և, իբր հետո խուզարկությամբ «հայտնաբերելով»՝ նստեցնում. այն, ինչ տարիներ շարունակ անում է գուլագառուսաստանյան «իրավապահ» համակարգը: Փիլիսոփայությունը խորն է. բոլորն են հանցավոր, ում ուզենք նստեցնենք՝ հանցանշանը գրպանները կսպրդեցնենք, անհանցավոր սույն աշխարհքում չիք: Գողը պիտի նստի բանտում. այն գողը, ում ես անձամբ որոշել եմ նստեցնել, մնացածներն էլ թող սակաված մնան, քանի հերթն իրենց չի հասել: Ինկվիզիցիայի ժամանակներից ի վեր նույնն է. բոլորը մեղավոր են, բոլորը մեղք են գործել այս կյանքում, կոտանքների միջոցով մե՛նք կորոշենք՝ ով է սատանայի ազդեցության տակ, ով՝ ոչ: Որովհետև մենք՝ բեսպրեձել ենք, դատավճռից դուրս, անսխալական աստծո անունից գործող բլատնոյներ, այդ աստծո անունն էլ՝ իշխ: Մեղավորության արխայիկ իդեալական հակառակորդնալականացում, հին Հռոմի ժամանակներից, Հոբբս ու Լոքընով մինչև մեր օրեր՝ զարգացած լիբերալ իրավական համակարգի հիմքերի բռնաբարում:

Բայց ո՞նց համարձակվեցի: «Չի՛ կարելի իրավապահ մարմիններին օրսկատն՝ կզցնել շրիշակից ցածր», սաստում է Մեծ Ֆոլկլորիստն ինձ, քանի որ կզցնելը, բնականաբար, իր ամենասիրելի զբաղմունքներից մեկն է, ի՛ր արտոնությունը, և ի՛նքն է որոշում՝ ում կզցնի, ում՝ ոչ: Վերջերս էլ Մեծ Չաստուշկայագետն ասաց, որ քանի որ Արևմուտքում բոլորը ֆիքսված են «ոչ-ավանդական հարաբերությունների վրա», դրա համար էլ ուզում են և ոչ-ավանդական էներգետիկան զարգացնել: Դե, ինքը, սանկցիաների դիմաց, հրաժարվում է ավանդական հույժը վաճառել Եվրոպային, «հասկանալի է», պատերազմ է (բառ, որ ինքն արգելել է): Ֆիքսենք, ինչու՛ է, ի վերջո, «ոչ-ավանդական» սեքսուալ հարաբերությունը պուտինալեզվով դարձել Արևմուտքի անվանում՝ «գեյթոպա»: Ո՛չ թե, ինչպես Եվրոպան այդպես անվանողներն են պնդում, իրենք ավանդական սեքսուալ և ընտանեկան հարաբերությունների կողմնակից են: Ո՛չ թե որովհետև «ոչ-ավանդական» հարաբերությունները դիտարկում են որպես ավանդական ընտանիքի փլուզման մեխանիզմ և դեմոգրաֆիկ կատաստրոֆի ճանապարհ, որի արդյունքում բոլորը, դառնալով գեյ և լեզբիան, կդադարեն շշի վզիկներին մատակարարել թնդանոթի մսեր և կամ թնդանոթի մսեր ծնողներ:

Իսկ որովհետև՝ իմ դպրոցում և Գուլագում «ոչ-ավանդական» սեքսուալ հարաբերությունը զուտ կզցնելու, ստորացնելու ձև է, և նրա իդեալական, վերջնական տարբերակը չի կարող լինել այլ, ասենք՝ կոնսենսուալ: Գեյերն այստեղ կզցվածներն են, թեև երբ ես առաջին անգամ դա հասկացա, մի հարց առկախվեց. բոլորը: Իսկ «ակտիվները»: Չէ՞ որ այդ նրանք են, որ կզցնում, «գյոթըցնում» են նրանց, ում ուզեն կամ ում որ պետք է: Իրենք չե՛ն գյոթըցնում

they are preoccupied with “non-traditional relations.” That’s when he “hit back” at Western sanctions by banning raw materials exports to Europe. For obvious reasons: it’s a war, isn’t it (the very word he banned, but it can be used by him or some others unless he decides that they must be prosecuted for using it. Will he ever decide to prosecute himself for violating his own rule?). After all, we must find out why the West is associated with “non-traditional sexual relations” and labelled as “gayrope” in Putin’s language. It’s not because those who call Europe by this term are advocates of traditional family relations. It’s not because, as they claim, they see “non-traditional relations” as a means of destroying traditional family values which will result in a demographic disaster during which everyone becomes gay or lesbian, no longer providing the bottleneck system with the needed amount of cannon fodder and/or producers of cannon fodder.

It’s because at my school and in the Gulag, “non-traditional” sexual relations are a way of humiliating, disgracing and subduing people; its ideal version serves only one purpose and cannot be consensual. Gays are those who are disgraced and subdued, full stop.

When I first realized this, one question remained unanswered. What about dominant guys? After all, they are the ones who humiliate or “faggotize” (enslave) whoever they want. It implies that they get “faggotized” too, doesn’t it? The guys in my class strongly disapproved of this interpretation. Thinking a lot as I got older, I concluded that it is those who put down somebody else that get “faggotized.”

The Gulag is a purely negative experience. It does not have to exist, it is a human creation, its existence depends on man, man is free to create a Gulag or not to create one. “Freedom or necessity,” “freedom or providence” – all these “thin” abstractions or antinomies proclaim that people are not free and make it impossible to argue against. As soon as an abstract and “thin” antinomy is brought forward, freedom gets destroyed. Or put down. As I said above, the solution to this problem, articulated by Kant himself, is action. Act, as if you were free, act the way you want others to act in a given situation. You don’t want to create a Gulag, do you? You don’t want to end up in it, do you? So don’t create it.

That’s easy for you to say. What about no-limits *bespredel*? How do you confront it without becoming a no-limits person? What about self-defense? Wouldn’t you tear off the civilization clothes imposed on human beings, turning into a wild beast, and lashing out in every direction if your mother’s fingers were cut off and put in her mouth – an episode we witnessed recently (see below)?

Let me remind you of one of Mr. Putin’s last “historic” phrases. Maybe even those who remember it have not quite got it right. On February 7, 2022, he uttered this phrase: “You may like it, you may not, bear with it, my beauty.” The original version goes:

համապատասխանաբար: Իմ դասարանի տղերքն այդ մեկնաբանությանը, իհարկե, սկզբունքորեն դեմ էին, սակայն ես երկա՛ր մտածելուց և ապրելուց հետո եկա եզրակացության, որ՝ այո՛ւ. *կըզրցնողները, իրոք, գոթընում են: Եվ ավելին. հենց իրե՛նք են գոթընում, ո՛չ թե կըզրցվողները:*

Գուլագը զուտ բացասական փորձ է, և այն կարող է չլինել, քանի որ նրա կերտելը մարդկանցից է կախված, իսկ մարդն ազատ վարքի տեր կենդանի է: Այո՛ւ, «ազատություն թե անհրաժեշտություն», «ազատություն թե նախախնամություն»՝ բոլոր այդ նիհար արստրակցիաները՝ անտինոմիաները, անհնար են դարձնում վեճը և մարդկանց ասում՝ դուք ազատ չեք, այսինքն՝ հենց որ նիհար արստրակտ անտինոմիա ես առաջադրում՝ ազատությունն արդեն կրված է: Կզգված: Ասացի, որ Կանտի՛ իր իսկ ձևակերպած այդ խնդրի լուծումն է՝ արարքը, վարքը: Վարվի՛ր այնպես, ասես ազատ ես, և՛ այնպես, ինչպես կուզեիր, որ վարվեին բոլորը տվյալ իրադրության մեջ: Դու չես ուզում, չէ՛, Գուլագ կերտել: Որ դու մեջն ընկնես: Մի՛ կերտիր:

Չեշտ է ասելը: Բա բեսպրեճե՛լը, դրա՛ն ինչպես հակադրվել առանց բեսպրեճելչիկ դառնալու: Բա ինքնապաշտպանությունը: Ինչպե՛ս չհանել մարդկայնության շորիկները, չազատագրվել դրանցից և ամենավտանգավոր գազանի պես չարշավել՝ խժոճելով շուրջբոլորդ, երբ մայրիկիդ մատը կտրել և կոխել են նրա մեռած բերանը. դրվագ, որ արձանագրվեց վերջերս (տե՛ս ստորև):

Շամենայն դեպս՝ պարոն Պուտինի վերջին «պատմական» խոսքերից մեկն էլ հիշեցնեմ, նույնիսկ ովքեր հիշում են՝ գուցե լավ չեն հասկանում. 2022 թ. փետրվարի 7-ին ասվեց. «Нравится-не нравится, терпи моя красавица»:

Օրիգինալն այսպես է.
Спит красавица в гробу
Я подкрался и ебу,
Нравится, не нравится
Спи, моя красавица!

Ինքը՝ չաստուշկան, արդե՛ն «ձեռք չտալու» քվինտեսենցիան է՝ խեղճ տղամարդու անհուսությունը՝ կնոջը համոզել, այն աստիճան, որ նեկրոֆիլիան է միակ ձևը մնում նրան հասնելու, վրեժը լուծելու և կիրքը բավարարելու՝ միաժամանակ (ասում են՝ ագրեսիայի և սեքսի կենտրոնները տղամարդու ուղեղում իրար մոտ են, և վրեժը ագրեսիայի ամենաքաղցր ձգանիկն է): Բայց մի բանի պուտինյան փոփոխությունը՝ терпи. դիմացիր, համբերիր, տառապիր (терпила-ն Գուլագում նա է, ով ստորացման առարկա է, ճար չունի, բացի համակերպվելուց), է՛լ ավելի խորն է տանում. բեսպրեճելչիկ նեկրոֆիլն այնպիսի՝ նեկրոֆիլ է, որ

In her coffin lies my darling,
I jumped in and started f*cking
You may like it, you may not,
Sleep, my beauty, it's your lot.²⁰

The rhyming verse itself is the quintessence of “don’t touch” – an act of desperation when a man fails to seduce a woman and resorts to necrophilia to get his revenge and satisfy his desires at the same time (they say that brain mechanisms of male sexual behavior and aggression are linked, revenge is the sweetest form of aggression). The fact that Putin replaced the word “sleep” with “bear with it” (терпи), implying that the dead corpse should tolerate, endure and suffer such intercourse (in the Gulag the Russian word “терпила,” translated as “sufferer” refers to someone who is an object of humiliation and has no choice but to bear with it) makes things worse; a no-limits necrophiliac is no ordinary necrophiliac, since he claims that even a dead body should experience pain during the intercourse with him and has to bear with it. Revenge (for being turned down) and humiliation come together. As this phrase uttered by the head of a world power was addressed to a man and not a woman (a woman’s corpse, to be precise), it claims to turn the former into a *garlakh*. This *blatnoy* first kills, then copulates with the corpse. He will seize Kherson, exterminating its population, then he will leave it and carpet-bomb the city, razing it to the ground.

The woman is dead in the rhyming verse. As for the Armenian servicewoman killed during the border attack of Azerbaijan on Armenia, on September 14, 2022, we don’t know how it happened. Perhaps they first raped, then killed her, and most importantly, they cut off her fingers, put her severed fingers in her mouth, filming and posting it on the internet, so everyone could see her manicured fingers. Revenge, rape, humiliation, and mutilation come in one package. There is no limit to blood feud if no-limits *bespredel* reigns. Sex implies reciprocity, whereas “sweet” no-limits violence signifies a liberation from that “chimera” called civilization and its garments. It implies disrobing the beast. When the beast is naked, it wants everyone around it to be naked too. The prototype of the monument to the heroism of the Armenian people thus manifested itself. A female finger cut and stuck in the mouth of a killed woman soldier. In his address on February 7, 2022, the farsighted Great Connoisseur of Folklore, predicted it accurately.

Raping first, killing later, or vice versa? From the perspective of a no-limits person, there is only a slight difference. Inhumanity knows no bounds, you can step into it whenever you want, you can do it in any order you wish. The person standing before you is as much an object to you as a tearful child (Dostoevsky) or a hundred thousand people. Your plan is to destroy the soul, that is, the image of

նույնիսկ մեռածը զգալու է իր կենակցելն ու ստիպված պիտի դրան դիմանա: Որ վրեժի մոմենտն էլ չզգա: Եվ, քանի որ համաշխարհային իշխի այդ բարձունքի խոսքը տղամարդու է հասցեագրված՝ կինարմատ (նախկին. կինարմատի դի) էլ չէ այլևս հասցեատերը, այլ՝ գառլախ: Բլատնոյը սկզբում սպանելու է, հետո կենակցի: Սկզբում խեղճանքներին կոտորելու է, գրավի քաղաքը, հետո՝ նահանջի և աշխատի հողին հավասարեցնել գորգային ռմբակոծություններով:

Չաստուշկայում արդեն մեռած է, 2022 թ. սեպտեմբերի 14-ին հայ-ադրբեջանական ֆռոնտում հայ կին զինվորականին սպանելը չգիտենք, ինչպես է կատարվել. գուցե սկզբում բռնաբարել են, հետո սպանել, գլխավորը որ հետո՝ մատը կտրել և բերանն են կոխել, նկարել և դրել համացանց, որպեսզի խնամված, մանկկյուր արված մատը բոլորը տեսնեն: Որովհետև բռնանալն ավելի զորեղ կիրք է, քան սեքսը, վրեժը քաղցր է, վրեժ հեշտագին, արյան վրեժը թե զարգանում է բեսպրեժելի պայմաններում՝ պրեժել չկա: Մեքսը, ամեն դեպքում, երկուստեքություն է պահանջում, քաղցր բռնությունը՝ զուտ ազատագրում քաղաքակրթություն կոչված «քիմերից»՝ այդ շորիկներից: Գազանի մերկացում: Գազանը երբ մերկ է՝ ուզում է բոլորին էլ շուրջը մերկացնել: Թեթև շունչ (Բունին): Գազանանալու կոլմինացիա՝ կլիմաքս: Հայ ազգի հերոսության հուշարձանի նախատիպն այդպիսով դրվեց: Մատը՝ բերանում: Ժողովրդական բանահյուսության մեծն գիտակը, ուրեմն, 2022 թ. փետրվարի 7-ին կանխագուշակեց ճշգրտորեն, «ասես ջրի մեջն էր նայում»:

Սկզբից բռնաբարել, հետո սպանե՞լ, թե՞ հակառակը. բեսպրեժելչիկի տեսակետից տարբերությունը կարծես մինիմալ է: Անեզրությունն անեզրություն է, ուր պահից էլ մեջն ընդգրկվես ու ո՛ր հաջորդականությամբ էլ էդ գծով գնաս. անմարդության անեզրությունը: Ինչպես որ երեխայի արցունքն ու հարյուր հազարի մահը՝ էլի դիմացինը օրյեկտ է, Աստվածակերպը, Աստվածամայրակերպը՝ հոգին ջնջվելու ենթակա: Գլխավորը՝ հոգին ջնջիես, փորձես ապականել (ապարդյուն), որպեսզի անհոգի քե՛զ հավասարեցնես, իսկ սպանելուց առաջ թե հետո էական չէ: Կենտավրոսը երկու տեսակի է լինում. գազանի և մարդու միասնություն կամ՝ բնականի և Մարդու՝ աստվածակերպի: Թույլ չտալ այդ երկրորդ տեսակի գոյությունը՝ դա՛ է պոլիմորֆալոգիան համավարակի հրամայականը:

Կինարմատը՝ ի՞նչ. «այն» չկա կոնցեպտուալ առումով. զուտ օրյեկտ, թնդանոթի միս արտադրելու մեխանիզմ: Այն բնակչության մեծամասնություն է, այն «ավելի» երկար է ապրում, այն մեծամասնություն է կարևորագույն մասնագիտական ասպարեզներում՝ բժշկություն և ուսուցում, այն ավելի կրթված է, այն այժմ նաև մասկուլին էս աշխարհի քաղաքական պաշտոններով մագլցում է և զուտ իր քանակի պատճառով,

20 <https://www.themoscowtimes.com/2022/02/11/a-russian-sleeping-beauty-a76338>

God and of the mother of God. Your main task is to destroy the human soul, by trying to corrupt it (in vain) so that it is reduced to your inhuman nature. It doesn't matter whether you do it before or after the murder. The centaur is the amalgam of Man (as the image of God) with the animal side, the beast. The main aim of the pandemic of Putinism and Gulagism is to annihilate the former.

What is a female being? In that concept, "it" doesn't exist, it's just an object, a mechanism for producing cannon fodder. "Its" population exceeds that of men, "its" life span is longer, "it" dominates such important fields as medicine and teaching, "it" is more educated, and now "it" is climbing the political ladder of this masculine world. Even if politics don't change fundamentally, "it" will reach new heights due to "its" large population. At some point "it" will replace the "non-female being." But we will never let it happen. After all, "it" doesn't count, just as any other humiliated being.

A "natural" order of things consisting of the humiliated who, though dead, should also endure and tolerate the pain of rape as if experiencing Stockholm syndrome – that's the ideal of masculinity that prevails in our "school class," the epitome of Putinism and Gulagism and the embodiment of the world's depravity. That's the puerile bacchanalia of the *vertukhai* and *pridurki*, the criminal elements who gained the upper hand. God forbid that this plague befalling the human race now and then should pervade the lifeworld. Alas, it has the ambition and perhaps the potential to do exactly that.

նույնիսկ եթե քաղաքականությունը շատ գիտակցորեն չփոխվի էլ, շուտով ավելի՛ է հաստատվելու այդ գազաթներին, այն գուցե ինչ-որ պահի պարզապես դուրս մղի «ոչ կինարմատների» տեսակը,- բայց թույլ չե՛նք տա. այն մարդահաշիվ չէ՛, ինչպես և գաղախացած ցանկացած այլ:

Մենած, բայց այնուամենայնիվ ցավ զգող գաղախացվածների ասոցիացիայի ստիպված, *ստոկհոլմաբար* դիմանալը *բեսպրեձեղաձև* բռնաբարվելուն որպես աշխարհի «բնականոն» կարգ. դա՛ է կյանքաշխարհի դուրսընկածության՝ «մեր դասարանի» գուլագապուտինյան մասկուլինության իդեալը, «վեռխ վեկալած» բլատնոյ *վիռտուխայների* և *պրիդուրկների* ինֆանտիլ, մալուխտկային վակխանալիան: Աստված չտա, որ հիվանդության այդ պատմությունը, մարդկության գլխին երբեմն վայրէջքող այդ ժահրն իրոք ճարակի համայն կյանքաշխարհ: Ավադ, ինքն այդ հավակնությունն ու գուցեև պոտենցիան – ունի: